ԿՌՈՒՆԿ

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ

Գ· ՏԱՐԻ· 1863· ԹԻՒ Ժ·

ՀՈԿՏԵՄԲԵՐ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄԸ

Գ· Շ—յի·· ՅԻՇՈՒՏԱԿԱՐԱՆԻՑ ՀԱՆԱԾ

1842 թիւ· օգոստոսի 12 Մաղարթու Նա-խավկայի վանքումը ։

Շարունակութիւն.*

Էս յոտիշտակող և վայրենի ժողովուրդը, լաւ գիտէինք թէ՝ և բազմաւոր են, բայց դժուարութեամբ հազարովմին տեղ գումարուին ։ Հրամայեցի հեծելազօրաց իսկ և իսկ գնան այս այն կողմը ժողովին վերադարձնեն մեր ցրուեալ և փախած զօրականներին ։ Մի ջօրէ էր, ցրուելոց և փախստէից սկիզբն սկսաւ վերադառնալ, և չորս օր տևեց, հազիւ նոցա վերջը կարվեցաւ ։ Նայելով սպանելոց հաշուին, գտանք ընդ ամէնը

* Տես կռնկան Դ· տարւոյն Զ· թուումը· երես 460 ։

եօթանասուն երեք հոգի մեզանից, իսկ թշնամեաց կողմէն տասն և ութն հոգի, որք մեր բանակէն բաւականին հեռի էին ընկած : Սրանցից մինը դեռ ևս կենդանի լինելով—որ մին օրից յետը մեռաւ—ասեց մեզ թէ, մեք ձեր յառաջապահ զօրքը Մաշադ գնացող ուխտաւորներ կարծելով՝ ընկանք նոցա վերայ, և փոքր փոքր պատերազմը սաստկանալով, ձեր յառաջապահները փախան մնան բանակի մէջը, այնուհետև մեք իմանալով բանակ է, փախանք, և ոչինչ չկարողացանք տանել ձեզանէ, և թէ մեք հաղիւ երկու հարիւր հեծելազօրք լինէինք :

Եւ որպէս մեք յետոյ քննեցինք, իմացանք որ մեր քնաթաթաղ զօրքը, տեսնելով հրացանների կրակները, կարծել են թշնամիք են, վասն որոյ և միմեանց վերայ ինքեանք դատարկելով հրացաններնին, սկսել են փախչել և յափշտակել իւրեանք իւրեանց զօրականների վրանների կայքը : Ի հարկ է՝ էսպիսի բանակի ցրուիլն անօրինակ և առաջինը չէր Պարսկաստանումը, և ես հասկանում էի որ, թէ որպէս իմ ասաքճանաւորների անկարգութիւնը, նոյնպէս-և թշնամեաց լքութիւնը չպատժուին, աւելի և ևս ճնաների պատճառ կլինին : Վասն որոյ պարտաւոր էի ես, իմ ներդործութիւնը և խստութիւնը նախ թշնամեաց վերայ փորձել, ապա թէ ոչ՝ դիւրութեամբ զօրականքը կարող էին յանդգնուիլ, ապստամբուիլ և պատճառ ընիլ աւելի ևս մեծ ճնասի ու խայտառակութեանս :

Հէնց ամենայն փախստական զօրականները վերադարձան, էն օրը ժողովեցի ու քաջալերեցի—յոյս տուի թէ ձեր՝ անպատուութիւնը և ամենայն ճնասը Աստուծով մեր թշնամեաց տունէն, տեղէն կրկնապատիկը մինչև երեք օրը կհանեմ, միայն թէ այսուհետև եթէ զգոյշ կենաք և ինչ որ ասեմ, լսէք ու հնազանդուիք, նոքա էլ ուրախութեամբ խոստացան հետևիլ ինձ, ըստ որում, ասեցին, մեր տունը տեղը էստեղայ հեռու չէ, որքան և աւար բերենք, կարող եմք դիւրութեամբ մեր ընտանեացը ուղարկել և ցոյց տալ թէ մեք վատ զօրականք չենք, և էս համբաւն անպատճառ կերթայ Յարդարին, և մեր աւար զրկելովը կստեմք և կապացուցանեմք, որ թշնամութեամբ է մեզանէ վատ լուր տարուած : Էս նո-

պահին մին սարի կողքումը բանակուեցանք—էս սարը բաժանում էր նրանց մեզանէ : Ամենևին տեղեկութիւն և յոյս ևս չունէին, որ ես էնպէս շուտով կերթայի իւրեանց վերայ: Իմացանք էն տեղ կալանաւորներէ, թէ նոքա իւրեանց ձիջորի, աւանակ, եզն, խաշինք և շարժական կայքն, տարած արևելեան կողմի բարձր սարի վերայ ապահովացրած էին քանի մի դժուարամատչելի բերթերի մէջը : Երրորդ օրը առաւօտեան յարձակուեցանք նոցա վերայ : Երբէք չէի կարծում էս թափառական ժողովուրդն ընդդիմանայ մեզ, ոմանք իւրեանց փոքրիկ փոքրիկ բերթերովը, ոմանք իւրեանց վրաններէրի մօտիկ բլրների և քերցերի վերայ ժողովված դժուարամատչելի տեղերովը : Բայց կային և էնպիսի վրանաբնակներ, որք դաշտի վերայ վրաններ խփած, չկարողացան մեզ ընդդիմանալ կամ փախչել. և ես տեսայ սոցա վերայ գնալով, աւելի ժամանակ կարող եմ վաստակել վասն որոյ և թողի բերթերն և ամուր տեղրանքն, վրանների վերայ յարձակուեցայ : Շուտով հարիւր քառասուն գերդաստան հնազանդվեցան մեզ :

Հրամայեցի նոցանէ քանի մի երևելիքը բերին և առանձին առանձին խօսացրի տեսայ չեն ուզում ճշմարիտն ասել. վասն որոյ և կարմրած շամփրներով նեղայնել տուի, մինչև ճշմարիտը խոստովանեցան, թէ ուր է ամրացած ժողովրդապետը, որ իւր ստորադրեալ ժողովրդովը մեզ վերայ էր յարձակուած, և կամ հասարակական շարժական կայքն ուր են ժողոված : Ցայտնի է էսպիսի դառն և բարբարոս պատիժներիցը, ոչ ինչ չի ծածկուիլ : Երբ իմացայ ժողովրդապետի տեղը, որ մեզանէ շատ հեռի չէր, չուեցի երեկոյեան նորա բերթի վերայ : Հետևակը ծանրութիւն էր մեզ համար, վասն որոյ և նրանց թողի և հեծելազօրքը վեր առի, փութացայ գնացի. վախում էի մեր մօտենալոյ լուրը հասնի ժողովրդապետին, դուրս գայ փախչի : Կէս գիշեր անց էր հասայ և պաշարեցի նոցա : Բերթն ընկած էր մին բարձր սարի տակին, և սարի գլխի վերայ ժողովրդապետի տներն էին, ուստի առատ աղբիւր էր բղխում, շատ էլ պաշար, որպէս լսեցի, ունէին ժողոված ներսը : Լուսադէմ էր յետ մնացած հետևակ զօրքը հասաւ մեզ նման բերթի չորս կողմը պաշարեցին, կէս օր էր

է հասնում շատ ուրախանում է Սարդարը, վասն որոյ և Շահին իմ մասին լաւ գրեր է գրում։

Սարդարն ինձ հրամանագիր էր տուած տիրապետողաց վերայ, որ մեր թոշակը տան ու ինձանէ ձեռագիր առնեն, որ ժամանակաւ գանձարանի հարկի հաշուումն ընդունվի։ Նոյն պէս և խնդրած էր Շահին շուտով էսպիսի հրովարտակ ևս նա գրէ առաքէ ինձ Ճանապարհին հասնէ, որպէս զի ամենայն տեղ ցոյց տամ տիրապետողաց, որ իմ ձեռագրովը թոշակ տան մեզ։ Գիտէր սարդարը որ իւր հրամանագիրը միանգամ Ղազվին միայն կրնդունեն։ Թէհրանու հողն մանելիս, ոչ որ սրա տուած հրամանագրին ականջ չդրաւ և Շահիցն էլ հրովարտակը չըստացայ։ Երբ մնանք Թէհրան, քաղաքապետն զըլացաւ մեզ թոշակ տալը, պատճառ բերելով թէ Շահէն հրովարտակ չունիս։ Զօրականներն անճարութիւնից սկսեցին ոչ միայն Թէհրանու մէջը բնակչաց ձեռքէն բռնութեամբ հաց պաշարեղէն և ամենայն կերպ ուտելիքներ խլել։ այլև չորս կողմի Ճանապարհների վերայ յուղհարութիւն էին անգամ անում։ Քաղաքապետն և երևելի բնակիչները գանգատեցին, ասելով թէ, Շահը մեր քաղաքն իւրեան անձնականը գիտէ, մեք պարտաւոր ենք շուտով գանգատել քեզանէ և ոչ թէ զօրականներէդ, ես ևս պարտաւորեցայ իմ զօրականներէն, որոնք յանցաւոր էին, պատժել, որպէս զի միւսները զգուշանան։ Մընացած էի երկու ջրի մէջը, պատժէն և կամ հաց չտալն երկուսումն էլ յանցաւորն ես էի։ Մին օր առաւօտեան լսայ, որ զօրքն ի միասին ապստամբվել են, և իւրեանց զօրավար են ընտրում։ Շատ երթևեկութեանց յետոյ որ իմ և զօրականաց մէջն եղաւ, իմացան, որ թոշակ չտալոյ պատճառն ես չեմ։ Միւս կողմիցը քաղաքապետը տեսնելով, որքան աւելի երկար շարունակուի իմ և զօրացս մէջն երկպառակութիւնը էնքան մարդասպանութիւնը, գողութիւնը աւելանալոց է Թէհրանու մէջին, ըստ որում անհնազանդ անգլուխ զօրականները ինչ անում են անպատիժ են մնալոց, վասն որոյ համաձայնեց թոշակ տալը, եթէ միւս օրը չուշենք։ Զօրականները երբ էս լսեցին, հնազանդութիւն խոստովանեցան և միւս օրը առաւօտեան բանակովս դուրս եկի Թէհրանէն դնանք դէպ ի Քաշան

ուելի ևս կրարկանայ։ Բաշան իջայ քաղաքապետի տանը։ Սա անակնկալ ինձ տեսնելով զարմացաւ ու շատ պատուով և սիրով ընդունեց, և երբ յայտնեցի նրան միտքս, աւելի լաւ խորհուրդ տուաւ զօրականացս զսպելոյ համար, այսինքն,

Բախտիարցիք, ասէց խելացի քաղաքապետը, միշտ ապրստամբ և անհնազանդ են եղած Պարսկաստանի թագաւորներին, և շատ անգամ էլ ժողովված եկած են մնած Բեաղազ Բաշան, և Թէհրան, Ասպահան անգամ, այրած, յաւեր դարձուցած ու վերապարձած են։ Նոր Շահն ևս քանի մի անգամ զօրք ղրկել է նոցա վերայ և չէ կարողացել զսպել։ Կարող ես ասել զօրացդ Թէ, ըստ որում Շահն Ասպահան չէ, որպէս ըսեցի Բաշան, լաւ ևս կլինի գնանք Բախտիարցւոց վերայ, պատժենք նոցա, և էն ճանապարհովն գնանք Ասպահան, որ մեզ համար աւելի զանազանութիւն չունի Թէ Բաշանի Թէ Բեաղազի վրովը գնանք Ասպահան։ Կամ Թէ կարող ես ասել, լսելով Թէհրանու և Ղումու քաղաքները գանգատ են գրած Շահին մեզանէ, եթէ առանց մի նոր յաղթութեան, կամ երևելի ծառայութեան գնանք, անպատճառ Շահը կը-պատժէ մեզ, ուրեմն գնանք Բախտիարցւոցը պատժենք, մեծ աւար, կողոպուտ էլ նրանցից ձեռք կբերենք ու յետոյ գնանք ու պարզերես ներկայանանք Շահին, որպէս զի Թէհրանու, Ղումու քաղաքապետաց գանգատները կարողանանք ոչընչացընել։ Կրկնէց խորհրդատուս, զօրաց վտարանջութեան գրգռիչը միշտ նոցայ հարստութիւնն է կամ մեծ աւարը կամ ստորին գլխաւորները։ Դու խորհուրդ տուր զօրականացդ, իւրեանց կահ կարասիքը կամ թողնեն էս տեղ, կամ էս տեղաց առաքեն Ասպահան, և երբ Բաշանու երկու երեք օթևան հեռացար առանց կահ—կարասիքի, պատժէ ապստամբ գլխաւորներին, էն ժամանակը զօրականները իւրեանց կայքի կամ ծանրութեան համար, որ հեռի տեղ են թողած, երբէք էլ չեն կողմնակից լինել իւրեանց գլխաւորներին և չեն էլ օգնել նոցա, մանաւանդ էնպիսի երկրում, ուր թշնամիքը մնա են և ահարկուք են նրանց։ Ես էստունք ասումեմ քեզ—քաղաքապետը իւր խրատները վերջացնելուց յետը աւելացրեց—չճանաչելով քոյ զօրականաց բնութիւնը, բայց Թէ խելացի

Քաշան, մեր ծանրութիւնն էն տեղ մնացելոց հետը. տանէն Ասպահան։ Զօրականները թէ և իմացան իմ հնարագիտութիւնը և ընդդէմ Իւրեանց ակնկալութեանը չկարողացան տէր լինել աւարից, այսու ամենայնիւ որպէս մոմ փափկացած էին և կամաց կամաց հնազանդվեցան և ոչինչ զիւղի կամ գիւղականաց նեղութիւն էլ չէին տալիս։

Մինչև Ասպահան հասանելս, պէտք էր անց կենայինք Քեամարայ և Փոշտայ, Փըրչիստան, Բուրվարի և Գերեայ գաւառներովը, որոց մէջին հարիւրից աւելի Հայոց գիւղօրայք կային. և լաւ գիտէի, եթէ զօրականքը մինչև էն տեղ գիւղականացը վնաս չտուին և վախենում էին, թէ բնակիչքը, որպէս Մահմեդականք, շուտով կարող էին Իւրեանց զանդատներն ինձ հասցնել, բայց Հայերիցն այսուհետև անխնայ ինչ ուզենան, առնելոց են բռնութեամբ, միամիտ ըլնելով, որ Հայերը չեն համարձակուել ինձ զանդատել և համարձակուին էլ ո՞ւմ միջնորդութեամբ կամ ո՞ւմ բերանաւ պէտք էր հասցնէին ինձ, ասենք միջնորդ ևս գտան, անպատճառ ևս չեմ լսել Հայոց բողոքանացը որպէս այլակրօն։ Պէտք է խոստովանվիմ ճշմարտութեամբ, որ ես ցանկանում էի, ով որ և իցէ պատճառ տայ, Հայերին պահպանեմ և մտածում էի ինչ հնարք գտնեմ, որ նոյն իսկ Հայ զիւղականքը զան ու ինձ յայտնեն Իւրեանց ցաւն, ինձ յայտնի էր որ քանի մի տարի յառաջ ինքը Շահն անբաւական գոլով Փերիոյ մեծամեծներին եկած նստած էր Քէիլ ասացեալ տեղումն, ուստի և տապատակ սիռած էն տեղու զիւղօրէից վերայ, որոց բնակչաց մեծ մասը Հայք էին և Վրացիք։ Ես ողորմելեաց ո՞չ թէ չորքոտանի կենդանիքը, տունը տեղն էին զօրականներն աւար առած, այլև շատ կին, աղջիկ, տղայք էին գերի տարած։ Ես ականատես չլինելով էն անցքին չեմ կարողանում մի ըստ միոջէ նկարագրել էն խղճալեաց ցաւն և նեղութիւնը։ Հիմի որ ես էի անց կենում նոքա լսելով Իւրեանց տղայքը, աղջկերքը, շարժական ինչքն և անասունները զրկած էին լեռնային և ամուր տեղանքը և ծերերը, պառաւները, ձեռը ոտից ընկածները մնացած էին գիւղերի մէջին։

Վաղուցվան անցք է պատմածս, այսքան միայն մտիս կը

պահովվել։ Ո՛չ—ո՛չ սոքա էնպէս տեղ չունէին՝ուր որ գնացել էին, չորս կողմը պատած Պարսիկներ պէտք էր լինէին, որք միշտ կմատնէին, թէ չկարողանային իւրեանք կողոպտել և խլել ինչ ունին չունին Հայերը։

Ա.ռաւօտեան շուտով ուղեցի Յովսէփին—լաւ դիտէի թէ Մովսէսը դարկրկին ինձ պէտք էր լացացնէր—։ Վերահասու եղայ քանի՛ Հայոց դիւղեր ենք անցած, զօրականք ինչ անիրաւութիւն են արել նոցա, և ո՛յք են, ինչ պէտք է արած, որ էլ չկարողանան նեղացնել, և վերջն ասեցի, ծածկաբար սովորցնէ Հայերին՝որ մին քանի ծեր սպիտակամօրուս մարդիկ, այսօր կամ վաղը ճանապարհի վերայ կանգնին շարքով անցանելս կամ երբ կիջնեմ նախաճաշիկ անելոյ, ձէն տան խան խնդիրք ունիմք՝։

Քանի մի Հայ էի ասած, բայց ո՞ւր տեղաց, չդիտեմ էնքան ժողովված էին։ Կէս օր էր, մին ջրի վերայ վայր իջայ չիջայ ճաշիկ անելոյ, և ահա մերձ հարիւրաւոր ճեպ ճերմակ մօրուսներով տղամարդիկ և պառաւ կանայք եկին ու առաջևս գետնատարած ընկան ու միաբերան լալով դոչեցին, մեզ օգնէ խան, միթէ մեք անհնազանդ ենք թագաւորին, կամ մեղաւոր ենք, որ Հայ ենք ծնած . . . . Որպիսի՞ քարասիրտ մարդ պէտք էր ըլնի, որ նոցա տեսնէր ու չարտասուէր կամ չխղճահարվէր։ Զէ . . . . չկարողացայ որդեակ . . . . . Ասեց միայնակեացն ու լռեց, և ահա ոլոռ ոլոռ արտասուները ձիւնափայլ մօրուսէն ցողելով սկսեց ողորմելի ծերունին հեկեկալն, որպէս թէ էն աղետալի տեսարանը, դեռ ևս աչացն առաջին նկարագրուած է, և դեռ ևս նրա խղճմտանքն յստակուած չէր էնքան տարուան քաւութեամբը։ Ի հարկ է նոքան տեսնելով և ես չկարողացայ չարտասուել։

Մին քառորդ ժամ կարելի է ևս տեսլի, անց կացաւ, համբերեցի գլուխս քաշ ձգած, տեսայ ծերունւոյ սիրտը տեղը չէ գալիս, և չի պէտք է էլ թերևս շարունակէ իւր պատմութիւնը, վասն որոյ և ես աչքերս սրբեցի ու նախաճաշիկս բաց արեցի և խնդրեցի քանի մի անդամ, և ստիպեցի դոնէ փոքր ինչ ուտէ։ Ո՛չ, ո՛չ, շնորհակալեմ, ասելով, ձեռը մեկնեց փոքր ինչ չոր ու ցամաք հացիցը կտրեց, ջուր ածեց

Հայ լինէին և թէ Պարսիկ չլեց ականջս : Ընդ հակառակն ամենայն գիւղացիք լսելով իմ այսպիսի զօրականաց հետ սատակութեամբ կառավարութիւն, միշտ մին օր յառաջ, մինչև նոցա գիւղերին մեր հասնելը, մեծամեծ ուտելեաց ընծաներով ընդ յառաջ կը գային ինձ : Ես ևս բաժին բաժին կանէի զորձակալաց և ասպիճանաւորաց մէջ անզանազանաբար :

Գիշերն Յովսէփին ասեցի, Մովսէսին կանչեց բերաւ վրան : Հարցի, շնորհակալ եղար արդեօք հիմի ինձանէ : Ողորմելիքն շնորհապարտութիւնից գետնատարած ընկան ոտքերս պագեցին : Նայեցէ՛ք, վերառայ , նայեցէ՛ք, այսուհետև եթէ զորձակալներս կամ ոմն ոք և ըլնի զօրաց միջէն, նեղացնեն ձեր հաւատակիցներին, ծանկաբար ինձ իմացուցեն տուէք, և չլինի թէ ուրիշին յայտնէք էս իմ ձեզ գաղտնի ապսպարելն: Յովսէփս և Մովսէսս շատ շնորհակալութիւններ յայտնող խօսքերով ասելուց յետը դնացին : Մինչև Աստահան, ուր որ Հայերը ինձ ընծայ կբերէին, կհրամայէի տան երեք Հայ ծառայից, հրապարակաւ ասելով ձեր աղգակցաց ընծայքն աւելի իրաւունք է ձեզ հասնի : Որպէս լսում էի, սրանք էլ միշտ Հայերի բերած ընծաները կվերապարձնէին տեարցն, և շատ անգամ քահանայիցն, որք իւրեանց ժողովրդի հետը կգային ներկայանալ ինձ կամ թէ նոցա դեկերի մօտը երբ կօթաղայէինք, Մովսէսն, Յովսէփն և Դաւիթն իւրեանց քսակիցը փող կտային քահանայիցն , որպէս զի իւրեանց և իւրեանց ծնողաց հոգւոյ համար աղօթք անեն կամ պատարագ մատուցանեն :

Շատ ժամանակուան անցքեր լինելով, ի հարկ է չէ կարելի պատմել տեղն ի տեղը կամ մանրամասնաբար : Լաւ մտիս չէ դալի, քանի օրումը հասանք Աստահան : Էս միջոցումը մին քանի տեղ լեռնարնակ վայրենի ազգերի վերայ մեք յարձակուեցանք , ոչ թէ հնազանդացնելոյ , այլ աւարառութեան համար և լսում էինք շատ տեղ որպէս թէ Շահը Աստահանու դուրս է դնացած, բայց ինձ անհաւատալի էր թուում— եթէ էսպէս մին բան լինէր, մտածում էի , անպատճառ Բաշանի քաղաքապետը կիմանար և կասէր ինձ : Մի ասել Շահը դնացած է եղած Շիրազի վերայ վեց շաբաթ յառաջ

տը պահելով և ճանապարհորդութիւնս Ատրպատականի որպիսութիւնները և նոր նոր լուրերը հարցնելով տեղն ի տեղը կուղէր տեղեկանալ, և ես էլ, որ ամէնին տեղեակ էի, երբ կը պատմէի աւելի ևս երկարօրէն քան թէ Սարդարի դրածները, օր ըստ օրէ նրա առատ կեղծաւոր շնորհացը կարժանանայի: Շատ երևելի պաշտօնատարներ և պալատականներ, էս իմ յառաջադիմութեան համար ցանկանում էին հետս ծանօթանալ:

Շահի մաքումը կար էս տեղրանքի քանի մի անհնազանդներին զսպելուց յետոյ, չուել գնալ Ատրպատական: Սարդարը շատ բողոքներ էր գրած Ղարաբաղու և Վրաստանու տիրապետողներէն և եղբակցուցած թէ, սոքա վատ օրինակ են այլոց տիրապետողաց, չհնազանդելով քոյ դրօշակին, դրդռում են ուրիշներին շփոթել: Ի հարկ է ես ևս հետևելով Սարդարի խորհուրդին, պարտաւոր էի դրդռել Շահի փառասիրութիւնը, մանաւանդ որ գործի միջին եղած էի, որպէս պատմած եմ: Ամիս ու կէս մնալով Ասպահան, յետոյ ուղարկէց երկու անգամ զօրքով, գնամ շրջակայ ապստամբներին պատժեմ: Երկու անգամն էլ կատարեցի ինձ յանձնած ծառայութիւնը ճշտութեամբ: Ասացի ճշտութեամբ, այսինքն, արիւնհեղութիւնը, աչք հանել տալը, մարդ խեղդել տալը, միանգամայն ասած, սպանանել տալը ինչ պատժով որ լինէր, որպէս ամենայն օր անպակաս էր պալատումը, նոյնպէս ամենայն տեղակալները և հրամանատարները, որոնք ցրվում էին էս կողմն էն կողմն, նրա անդառնալի հրամանները կատարելոյ, պարտաւոր էին հետևիլ նրա օրինակին: Ահա էստունք էր ճշտութիւնը որ ասեցի: Պարսկաստանը մին սպանդանոց էր եղած: Որքան շատ մարդ սպանել և պատժել տայինք, էնքան աւելի կյառաջանայինք նոր Շահի մօտը:

Յանկարծ թէհրանու կողմիցը ապստամբութեան ձայներ լսելով, հրամայեց Շահը զօրացը չուել նախ թէհրան և էն տեղայ Քիրման գնալ: Կարծում էի թէ սա ևս մեզ նման ծանր հանդարտ կերթայ բանակովը, բայց էնպէս կրակոտ և անհանդարտ բնութեան տէր էր, որ զարմացանք, ինչպէս տասն օրումը հասցրեց մեզ թէհրան: Որպէս թէ վռազում էր գնայ

ու բաւականին լէն ձորի մէջը—ուր ջրի և խոտի համար էլինք բանակված—շրջապատված ենք անթիւ հետևակ և հեծելազօր Լօռերէ և Բախտիարներէ։ Շահի անզգուշութիւնը էսպէս տեղում բանակվելոյ համար էր մեր էնքան օր թափառելն և երբէք բնակիչ չտեսնելը, որոյ աղագաւ միամիտ էր թէ դեռ ևս նրանք մեզանէ շատ հեռի են։ Թէ թշնամեաց յախուռն և անխորհուրդ մեզ վերայ յարձակուելը—որ սովորական է նրանց—չէր եղած, շատ լաւ էին փակած մեզ երկու լերանց մէջը, և կապած մեր ճանապարհի պաշարն էլ թէև առանց էնդուրն էլ պակաս էին մեզ, ու թէ երկու օր ևս էնպէս պաշարած սպասէին առանց շարժելոյ իւրեանց տեղէն, սովվալուկ կոտորվելոյ էինք։

Զիմացանք ինչ պատճառաւ, ինչ դիտաւորութեամբ, մինչ մեք մեր մէջը պատրաստվում էինք լուելեան, Շահին խընդրինք ինքը թէ կարելի լինի փախչի մին կերպով, և մեք զինաթափ լինինք, յանկարծ անխոհեմ թշնամիքը ընդդէմ մեր ակնկալութեան, մին առաւօտ խառն ի խուռն մեզ վերայ յարձակուեցան, էն էլ ոչ թէ սարերի գլխիցը, որ շատ յարմար էր նրանց, այլ ձորի երկու կողմէն, որ մեք իւրաքանչիւր կողմումը երկու երկու հազար պահապան կամ յառաջապահ զօրք ունէինք։ Շահին և բոլոր զօրացը հաւատի էր, որ եթէ մեք աշխատենք դուրս գանք ձորի մէջէն, որոյ հեռաւորութիւնը մին փարսախ կարելի էր ըլնէր, որ կողմիցը որ լինի, ընկնէինք լէն հրապարակի նման դաշտի մէջը, ամենևին կազատուէինք, ըստ որում մեք թնդանօթներ ունէինք, նրանք ոչ։ Արդարև էնպէս էլ եղաւ և մեր ակնկալութիւնը պակաուեցաւ։ Շահը, որ գիտէր, ամենայն անակնկալ թշնամոյ սխալանքն, աշխատել, ամրապարել շուտով իւր օգտի համար ի գործ դնել էն ժամին էլ կատարեց։ Մին էլ սաստիկ պատերազմի ժամանակը, թշնամեաց խումբը, որ մեր ձախակողմեան կրճի առաջապահ զօրաց հետը տաք տաք կռուում էր, և մեր կողմիցը շուտ շուտ նոցա օգնութիւն էր հասնում, թողեցին մին կողմի կիրճը քանի մի զօրականաց յուսով և բարձրացան բռնութեամբ լերանց ստորոտների և կողքերի վերայ, էն տեղաց մեզ հետ պատերազմեն, որն որ առաջ պէտք էին

հեռաւակ փախան, ազատուեցան, իսկ մնացեալքն, որոյ ճարակ եղան կամ գերի ընկան։

Կէս օրէն անց էր, յաղթութիւնը կատարեալ մեր կողմը վճռվեցաւ, և թշնամեաց ընդդիմութեան ստուերն անգամ չէր երևում։ Մեզանէ մերձ երեք հազար հոգի սպանուած և շատ էլ վիրաւորված կային, յորոց մինը ես էի կուրծիցս թրով։ Թշնամեաց կորուստը կրկնապատիկ էր։ Այս յաղթութեանը նայելով, աւարը քիչ էր և գրեթէ ոչինչ, որ մեր զօրացը վհատութեան պատճառ էր։ Թշնամիքը բաց ի երիվարներից, որոնցից շատ վիրաւորված էին, և սպանվելոց դրահներից, որք և ոչինչ մեծ արժողութիւն չունէին, ուրիշ աւար չէին թողած, և էն վայրենի և թափառական ժողովրդէն նրանցից աւելի պատերազմումը ոչինչ չէին ունենալ։

Սպանվելոց դիակներէն հոտելուցը երկիւղ կրելով բանակի տեղը փոխեց Շահը. հրատարակելով որ տասն օր մնալոյ է էս տեղ զօրացը հանգստութիւն տալոյ համար, ուստի և հրամայեց հեծելազօրներին ասպատակ սփռելն չորս կողմի գիւղօրէից վերայ, որք 8, 9, 10 վարստախաչափ հեռի էին մեզանէ ըստ որում որպէս ասեցի, մօտիկ գիւղերը դարտակուած էին։ Երբէք էսպիսի հարուստ աւար էնքան տարուումը չէր պատահած Շահի զօրացը ժողովել։ Քանի՞ քանի՞ հազար չորքոտանիք ժողովեցին բանակի չորս կողմը։ Բանակ չէր, այլ հոտանդեայ էր։ Վերջապէս եօթներորդ օրը թշնամեաց կողմէն քանի մի հոգևորականներ եկին հնազանդութիւն խոստովանելոյ համար և ներողութիւն խնդրելոյ։ Շահը ընդունեց նոցա առաջարկութիւնը, պայմանաւ որ տասն ժողովրդապետներէն պատանդ տային և երկու հազար հեծելազօր։ Երկու կողմիցը ընդունվեցան պայմանները, և Շահը վերադարձաւ Թէհրան թեթև զօրքով, որպէս զի բանակը յետիցը դնայ հանէ նրան Թէհրանումը։

Պիտի շարունակուի.

Ուստի խմբնուստութիւն, առ առաջնեղեալս այս նիւթ՝ առաւել քան զամենայն մերոյին ազգի պատմագրանն, ծանօթ եւ իրակութեանցն անձամբ անձին կրօղ եւ տաժանօղ գոլով, պարտ եւ պատշաճ վարկանիմ իմէջ ազգին մերոյ Հայոց ի 1799 ըստ Փրկչականին, եւ ի ՌՄԽԸ ըստ մեր թուականին եւ ի դեկտեմբերի 27 էն զեղելութիւնան Սրբոյ Էջմիածնի Կաթուղիկոսութեան եւ Կոստանդնուպօլսոյ Պատրիարգութեան, Հաւատառօտ պարզ եւ անաչառ պատմել, զի յամենայն ժամանակս դերապատիւ վերծանողք որպէս ներկայ եղեալք, ծանիցեն անթերի առանց տարակուսանաց։

Եւ զդուշացեալն ամենայն մերոյին կարգաւորք, իշխանք եւ ժողովուրդք, առանց բարեպէս պարագայիցն վերահասութեան, յայսպիսի ձեռնամուխ լինելոյ, զի մի միւսանգամ զիսգաղութիւն եւ դրաբեկարգութիւն Սրբոյ եկեղեցւոյ եւ Ազգի, սոյնասարաս յալիս խռովութեան տատանեցուցանեն։

Քանզի զնամայն պատմագիրս ի ներկայ ունելով տեսանեմք, թէ բոլոր մնծամեծ խռովութիւնք, եւ աներբ դատաց, ազգաց, եւ տէրութեանց, յանդգուչութենէ եւ ի փոքր իրաց առեալ ունին զսկզբնաւորութիւնան իրեանց։

Որպէս զոյն առաջիկայս ինքնին տեսի եւ պատմեմ. որ եմ ձեռնատուն զաւակ, ըստ հոգւոյ Սերատատցի Զերբեղեան Երանաշնորհ տեառն Յովհաննէս արբեպ. եպիսկոպոսի ձեռնադրեցելոյ ի սրբազան Սիմէոն կաթուղիկոսէ ի վերայ վիճակին Ամասիոյ եւ Մարսվանու։ Որոյ ըստ կնի Աստուածամարտիր մխիթարին ի Ամասիոյ քաղաքի ի մէջ սուրբ Աստուածածնի եկեղեցւոյն գնացեալ եմ ի Կոստանդնուպոլիս 1798 եւ ըստ Հայոց ՌՄԽԵ. թուականի ամսեանն նոյեմբերի ի կենդանութեան Զաքարիայ պատրիարգի, կացեալ ի ծառայութեան նորին սրբազնութեան աւուրս տակաւս, հասեալ եւ օր վախճանի նորա, յաջորդեալ աթոռ պատրիարգութեան Աստրմարեցի Դաւթեան սրբազան Դանիել արք եպիսկոպոս եւ ընդ միասին սուրբ Էջմիածնի եւ իմ կալով ի ծառայութիւն նորին բարձր սրբազնութեան, եղէ ըստ ամենայնի խելամուտ յաւուրսն այնոսիկ եղեալ իրակութեանցս այսոցիկ։

Խոնարհ ծառայ
Կիւմիշխանեցի Աղթոնեան Մանուէլ
Նուաստ վարդապետ։*

սիրեցեալ յաչս բոլոր ազգի մերոյ՝ զի եղեցի անձնապիր հովիւ բանաւոր հօտի՝ ընտրեալ հայրապետ հայկազեան սեռի. Ճշմարիտ յաջորդ մեր Լուսաւորչի. և հոգեւոր փեսայ Քրիստոսանկար սուրբ Էջմիածնի։

Ի ժողովիս այսմիկ՝ ընտրեալ յատկացուցին զերկու արք եպիսկոպոսունս՝ զԴանիէլ պատրիարգն Կոստանդինուպոլսոյ՝ որ էր ընիկ միաբան սուրբ Էջմիածնի։ Եւ զՆիփրեմ ծայրագոյն նուիրակն Ռուսաստանու։ Վասն այն յատկացուցեալք զերկու զի զԴանիէլ պատրիարգն տակաւին նորոգ եղեալ էին ի պոլիս (1799—ՌՄԽԸ. Մարտի 12) յայն իշխանութիւն՝ զկնի վախճանի Կաղզվանցի Զաքարիայ պատրիարգի. խորհելով՝ զուցէ անհնարին եղեցի ազգին՝ շնորհել զնա զոնէ առանց երկարելոյ. զերկրորդն արասցեն. զի մի մնասցէ սուրբ աթոռն անտէրունչ։ Որ և ի վերայ անուանց յիշեալ երկու արքեպիսկոպոսաց՝ ոսկեզօծ ծաղկօք՝ զեղեցիկ նկարիւք. համազգական պատշաճ ոճիւ՝ յայտարարութիւն և աղերսանաց մահզար գրեալ և կնքեալք բոլոր միաբանութեամբ սրբոյ աթոռոյն և իշխանօք Երևան քաղաքի մելիք և իւզբաշիք ընդ նոսա. և ի Մահմէտ խանէն ևս երկու գիր առեալք՝ մէկն առ սրբազան Դանիէլ պատրիարգն՝ թէ միարանք և ազգն ձեր՝ զքեզ կամին լինել իւրեանց խալիֆայ՝ վասն որոյ և ես սիրով հրաւիրեմ զքեզ զի հաճեալ հրամանալ գայցես և այլն։ Երկրորդն գրէ առ տէրութիւնն Օսմանցւոց՝ թէ մանաւանդ վարդապետքն. և կոզմանցս Հայքն՝ այդ կայսերապերճ քաղաքին ձեր՝ զԴանիէլ պատրիարգն Հայոց. խնդրեն լինել ի Բրեանց վանքին կաթուղիկոս. ուստի և ես խնդրեմ ի տէրութենէ ձերմէ բարեհաճել և առաքել զդա յայսկոյս և այլն։

Զայս գրութիւնք ընդ մահսարի՝ և այլ բազում առանձնական գրութեանց՝ ի սոյն մեր խնդրանաց. թէ առ ինքն սրբազան պատրիարգն. և թէ առ պերճափառ իշխանն ազգի մերոյ գրեալք. և ըստ Ջանադիր հետևողութեան ուրուն Թիֆլիզեցի Դաւիթ եպիսկոպոսի՝ որ միջնորդութեամբ խրնամոյն իւրոյ մելիք Աբրահամի. խնդրեալ ի միաբանից՝ ինքն լինել մահսարատար ի Պոլիս. յորմէ այսինքն ի մելիք Աբրահամէ հարիւրեալ նոցա՝ յանձնեալք ի ձեռս յիշեալ եպիս-

կոպոսի՝ զմահսար և զգրութիւնն՝ հետևեալ թուականի (1800—ՌՄԽԸ.) ցունվար ամսոյ 16. և հանեալք ի սուրբ աթոռոյն ճանապարհորդեալք գալի Կոստանդինուպոլիս և կատարել զինդիր նոցա :

Եւ մինչ մահսարարքն չև էր ժամանեալ ի Կարին քաղաք. հասեալ լուր վախճանի սրբազան կաթուղիկոսին՝ և յաջորդ ընտրութեան, ի Թիֆլիզ առ Լազրով անուն ենրալն Ռուսաց. և առ Կորկի արքայն Վրաց : Որոց կոչեալ զԱկինեցի կենդանի նահատակ ասացեալ Յովհաննէս արքեպիսկոպոսն. որ էր անդ յաղագս սպասաւորութեան սրբոյ կողմանս դեղարդին Քրիստոսի. զի խնդրեալ յառաջագոյն արքային Վրաց. վասն ժանտախտին յաճախելոյ ի քաղաքին. և ընդ յիշեալ արքեպիսկոպոսի առաքեալ էր սրբազան կաթուղիկոսն Ղուկաս : Ի ներկայանալ սորա առ արքայն և առ ենրալն. ասեն լուաք զվախճան սրբազան կաթուղիկոսին ձերոյ. ընդ նմին և զայլ ոք ի տեղի նորա յաջորդ ընտրութիւն, միաբանիցն և Երևանեցւոց. բայց հաւաստեաւ գիտացեալ՝ գրեա առ նոսա. որոց և մեք յատուկ գրեմք. զի անհնար է՝ բաց ի Յովսէփ արք եպիսկոպոսէ՝ այլ ոք լինիլ ձեզ հայրապետ առ այժմ. եթէ և դուք լսելով մեզ՝ զնոյն Յովսէփ արհին հաճեսջիք առնել. հաստատուն պահէք զկապ բարեկամութեան մերոյ ընդ ձեզ. և զՍուրբ Գեղարդն՝ որ աստ է. կարէք վերադարձուցանել յաթոռն. իսկ թէ ոչ՝ մեք որով և իցէ կերպիւ՝ կացուցանեմք զնա կաթուղիկոս. և զսուրբ Գեղարդն դժուարաւ ունիլ կարէք : Ի սոյն միտ և ոմանք իշխանք Թիֆլիզու՝ ազգականք Յովսէփ արհւոյն ասեն ցՅովհաննէս արհին : Զայս ամենայն ի նոցանէ լուեալ Յովհաննէս արքեպիսկոպոսն՝ առ ժամայն գրեալ ի սուրբ աթոռն առ միաբանսն. և խորհուրդ տայ ասելով՝ պարզապէս բաց ասելն ձեր ոչ բարուոք լինի. և ոչ պատշաճ համարիմ. այլ եթէ և դուք արժան դատէք. այլ իմն նոր մահզար գրելով՝ յիշեցէք և զանուն տեառն Յովսէփայ. յանձնելով ընտրութեան և կամաց ի մեծն Պօլիս ելեալ ազգին. զի նոքա խորհեսցին զօգուտ իւրեանց և սրբոյ աթոռոյդ :

Ի լսել զլորմելի միաբանից՝ զպնդումն Կորկի արքային. և

ենրալ Լաղբովին. և իշխանացն Թիֆլիզոյ Ծերունաղարթ սրբ-
բազան Մինաս արքեպիսկոպոսն, և այլ խորհրդական եպիս-
կոպոսունք՝ պատշաճ դատեալք զխորհուրդ Յովհաննէս արա-
հոյն՝ յետ տասն և մէկ աւուր առաջին համահաճական
մահզարին, այլ իմն մահզարակերպ գիր գրեալ՝ միայն ի մէջ
աթոռոյ եղեալ միաբանից կնքեցուցեալ, առաքեցին զկնի Դա-
ւիթ եպիսկոպոսի ի Կարին, զի և զնա ընդ առաջնոյն ի միա-
սին բերցէ ի Պոլիս։

Եւ ի մէջ այս երկրորդ մահսարի ևս նախ զանուն սրբ-
բազան Դանիէլ պատրիարգին էր գրեալ. և ապա փոխանակ
սրբազան Եփրեմ արքեպիսկոպոսի, զՅովսէփ արհին էին յի-
շեալ. բայց՝ թէ բանք շարադրութեան, և թէ կերպ թղ-
թոցն՝ յայտնի վկայ էին անհաճութեան մտաց գրողացն զանուն
Յովսէփ Արհւոյն։

Քանզի առաջինն՝ ոսկէզօծ գրութեամբ, գեղեցիկ շա-
րադրութեամբ, և բազմաց կնքովք մինչ զի և առ ճանապար-
հայն առ դիպեալ քաղաքն կնքեցուցեալ մահսաբարերին, իսկ
զերկրորդն ի վերայ հասարակ թղթոյ՝ անպաճոյճ շարադրու-
թեամբ, և եթ կնքովք միաբանից՝ բերեալ ի Պոլիս։

Եւ ոչ այսչափ միայն, այլ և բանքն յայտնապէս զտհա-
ճութիւնն յայտնէին, զի ստէպ ստէպ վերակրկնեալ աղերսա-
նօք ասէին՝ եթէ առ ոչինչ համարեալ զպատշաճական խընդ-
դիրս մեր՝ անհնարին արասջիք զառաքումն սրբազան պատ-
րիարգին ձերոյ, յայնժամ նուրբ նկատմամբ ամենայն պարա-
գայիցն թէ ութեանց Յովսէփ արհւոյն, զի թէ անվտանգ դա-
տեսջիք ազգիդ՝ սրբոյ աթոռոյն՝ և մեզ՝ այժմ և յապայն, դնէ
զրով յայտնեալք զհաճութիւն ձեր նմա. զի եկեսցէ այսր,
բայց մեք առաջին կամօք աղերսեմք շնորհել զսրբազան պատ-
րիարգն մեզ՝ որ է ըստ ամենայնի յոյժ օգտակար, և բաղձալի
մեր։

Սակայն յոյժ յայտարարութեամբ ոչ շատացեալք, յատուկ
ամենայն պարագայիցն ծանուցմամբ գրեալ առ Յովսէփ արհին
յետ բազում բանից ասեն. մեք ոչ եթէ ատեցող եմք սրբազ-
նութեան քո՝ որ յառաջագոյն ոչ գրեցաք ի մէջ մահսարին
զանուն յարգութեանդ, այլ զանգիտելով ի կարևոր պատճա-

ռացս՝ նախ՝ ըստ որում քան և եօթն ամէ՝ որ յայդկոյս ի մէջ տէրութեանդ այդմիկ կաս, և քանիցս ընդ պատերազմական զօրաց դոցա՝ ի վերայ Օսմայեանց դիմեցեր, և յոմանս տեղիս զՀամիան եկեղեցիս օծեր՝ որք ի բերանս բազմաց անկեալ՝ տակաւին խօսին ցաւելով։ Երկրորդ, ի դալ Հատամ Շահին յայսկոյս՝ և յաւերելն զարևելեան տունն, դու ինքնդ ըզ հետ զօրաց դոցա և յայսկոյս եկեալ՝ չարաչար վիրաւորեցեր և զազգայինս շահին, զխանան և զբազում զօրս։ Պարսիցն։ Եւ երրորդ գիտելով մեր՝ թէ փառաւորութիւն և անդորրութիւն քո յայդկոյս՝ տասնապատիկ առաւելէ քան զկաթուղիկոսին։

Վասն այսոցիկ ոչ համարձակեցաք ի մէջ առաջին մահսարին յիշել զանուն Սրբազնութեան քո, և այժմ թէպէտ ի ստիպել բարեկամաց Սրբութեանդ՝ գրեցաք և զՍրբազնութիւնդ, բայց վստահացեալ ի Հայրական գթութիւնդ՝ խնդրեմք աղերսիւք, զի նրբաբար խորհելով քո զասացեալ պատճառսն մեր՝ և զայլ հանգամանսն, զորս քաջ գիտես, եթէ ըստ ամենայնի թէ ի ներկայիս, և թէ յապագային (բոլորովին) առանց վնասու դատես զգալուստ քո, ազգին, սրբոյ աթոռոյն, և մեզ։ Նախ ի Պոլսոյ եղեալ ազգի մերոյ զսիրտսն հաճեցուցեալ այդի։ և ապա երագեսցես զշնորհաբեր գալուստդ՝ զի մեք ամենեքեանքն կամք պատրաստ ի հարալատ ծառայութիւն Ցեառնդ մերոյ։

Եւ զօրինակ այսորիկ գրոյ՝ բառ առ բառ գրեալ միաբանքն առաքեալք և ի Պոլիս յատուկ այլ գրովք յառաջ քան զժամանել մահսարաբերին անդ։ Եւ ծանուցանեն գերապատիւ իշխանայն թէ՝ ի բանադատել Թիֆլիզոյ իշխողաց՝ գրեցաք թէպէտ զանուն Յովսէփ արհւոյն, բայց ահա առ ինքն զայս օրինակ գրեալ ազդեցաք, զոր և ձեր գիտելով զայս ամենայն, օր և ժամ յառաջ՝ ամենայն կերպիւ զօգուտն ձեր, և մեր՝ խորհելով զարժանաւոր փեսայն սրբոյ աթոռոյն՝ ընտրեալ՝ առաքեսջիք ի պահպանութիւն անայցելութեան մերոյ։

Նաև առ սրբազան պատրիարգն ի ժամանակ։ ժամանակս այսինքն Յունվարի 16։ 21։ 31։ Եւ Յապրիլի 25 գրի՛ցելիք՝ ստէպ աղերսեն՝ բարեհաճիլ ինչրանաց նոցա յորս առաջի

առնեն զայս խղճահարութեան բան, «կոչէ զքեզ Տէր Աստուա-
«ած ի կոչումն սուրբ, մի՝ արհամարհեր զնովաւ. կոչէ զքեզ
«Տէր Քրիստոս, մի՝ խուսափեր, այլ հայեցեալ ի գրեցեալսն եր-
«ջանկացեալսն, այսինքն ի Մովսէս, Յերեմիայ. և յայլսն, փու-
«թա՛ կամաւորութեամբ կոչողին զՀետ Քրիստոսի Տեառն քո
«զի արդարև նոյն ինքն է՝ որ զքեզ որոշեալ զրաւէ փոխա-
«նորդել իւր, եթէ դու ի կայսերաբնակ քաղաքիդ անդորր կե-
«ցուցեան և փառաց ցանկացեալ՝ գիտելով զվիշտ և զնեղու-
«թիւն զաւառայն մեր՝ զայսքան անդակից միաբան եղբարց
«քոց զաղերսանսն անփոյթ արարեալ՝ ո՛չ կամիցիս լսել ո՛չ
«բարեաց առնես, և առաջի Աստուծոյ՝ ձեռն մեր ի քո զրա-
«գանս մնայ. և կաս և դու մնաս մեզ՝ և սրբոյ Եջմիածնին ա-
«մենայն լաւութեան և վաստութեանն պարտական, զի բաղ-
«մաժամանակեայ պիտանի միաբանքն ցիր և ցան լինին և այլն։
Եւ ի Պոլիս եղեալ խոհական իշխանք՝ այս ամենայն գրութեանց
միտսն զգացեալ՝ յառաջքան զժամանել մահսարաբերին, զմիաս
գրելոցն և զխնդիր միաբանից, Պատրիարգական արգով նախա-
պէս ծանուցին ի դուռն Տերութեան, զի մի՝ զինի իրր անհա-
բաղատք համարեսցին առ նոսա։

Որ և Տէրութեան ի լսել զդարձուածոց կերպսն, իսկոյն
հրովարտակաւ հրամանեաց ազգի մերոյ՝ ըստ նախնական սահ-
մանի անյապաղ ըստ հաճութեան, կատարել զընտրութիւն,
զի մի՝ այլք ձեռն արկցեն։

Յաւուրսն այնոսիկ՝ եկն եհաս և մահսարաբեր Դաւիթ
եպիսկոպոսն՝ ընդ իւր եղեալ գրովքն ամենայն, ի դատաւորի
կիւրակէին, Մարտի 18, յորում աւուր և սրբազան պատրիարգն
ի ձեռնադրել զքանի քահանայս, մատուցանէր զսրբազնագործ
պատարագն, և ի նոյն օր սկիզբն արարեալք յամենայն ե-
կեղեցիսն Պոլսոյ՝ հանդուցեալ յիշատակել զսրբազան Ղուկաս
կաթուղիկոսն, ըստ որում յառաջագոյն պայմանագրով ազգն
և միաբանքն հաստատեալ էին, առանց մահսարական յայտա-
բարութեան՝ ո՛չ զընտրութիւն և ո՛չ զհանդուցելոյ յիշումն
առնել։

Իսկ ի գալ Դաւիթ եպիսկոպոսի՝ և ի տալ զամենեցուն
զգիրսն, և յընթեռնուլ զմահսարսն, և ի ծանուցանել առ

խորհրդական իշխանան՝ թէ բոլոր միաբանութեամբ խնդիրք ի բեանց՝ յառաջադոյն վասն սրբազան պատրիարգին է, և հետևապէս տեառն Եփրեմայ արքեպիսկոպոսի իցէ, և ոչ երբէք խնդրին զՅովսէփ արհին յաղագս զանազան պատճառաց։

Ուստի պերճապատիւ իշխանքն՝ եկեալ առանձնակի առ սրբազան պատրիարգն ի գիտել զհաճութիւն նորա։ Պատասխան ընկալեալք՝ կամք իմ ենթադրեալ է կամաց ազգին, և յարգութեան ձերոյ՝ զոր ինչ յօգուտ և արժան համարիք զնոյն վասն Աստուծոյ արարեալ՝ ողորմեցարուք սրբոյ աթոռոյն զի մի՛ աւերութեան նորա և ազգի մերոյ վնասու պատճառինչ՝ անզգուշութեամբ ծնանիցի։ Եւ եթէ ամենեքեանքն դուք միակամութեամբ բարեհաճիք առ իս, ի յօգուտ ազգին իմոյ՝ և սրբոյ աթոռոյն, պատրաստեմ զանձն իմ և ես դնել ի մահ. և համարիլ զնոյնն անմահութիւն։

Պատասխանեալ յարգի իշխանաց՝ արդարև ամենայն բանք սրբութեան և համայն միաբանից, յոյժ պատշաճաւորք են՝ որքան առ յօգուտ սրբոյ աթոռոյն՝ եթէ լեցի կարելի. բայց աղերսեմք՝ զի և մեր գլխաւոր պատճառաց սիրով ունկն մատուցեալ՝ այնպիսի իրաց բուռն արկցուք, զի զկնի մի՛ ոք յամօթի հարցի։ Թէ և այն իշխանութիւն հոգևորապէս և մարմնաւորաբար յոյժ առաւել է քան զսոյն պատրիարգական պատիւ, բայց ըստ որում հազիւ՝ յԱստուծոյ յատուկ շնորհ ի ներկայիս, ընկալաք զսրբազան տէրութիւնդ ի բազմամարդ և ի բազմաազգ քաղաքիս մերոյ, և Վանդամայն արք և կանայք, ծերք և տղայք՝ յօգեալ կամք ի հայրական սէր սրբութեանդ և յուսամք օր ըստ յօրէ վայելել զնոյն։ Զի՞արդ իցէ կարելի թողուլ ի ձեռաց։

Երկրորդ՝ յայտ իսկ է սրբազնութեանդ, թէ յարքայաբընակ մայրաքաղաքս այս՝ կան յամենայն տեսակ մարդկանց ի ներկայութեան ամենեցուն պարտ է մեզ հանապազ ունել նման Տեառնդ ընտրեալ հովիւ, զի մի առակ նշաւակի լեցուք ի մէջ ազգաց օտարաց, որովհետև ամենայն յօգուտածք կենդանւոյն՝ զբարեկազութիւնսն կորուսանեն առանց զլխոյ պատշաճապէս առողջութեանն։

Երրորդ՝ զի եթէ և մեք հետևեսցուք աղերսանաց միա-

բանից, հարկ լինի յաջորդ սոյն պատրիարգական իշխանութեան՝ զայլ ոք որոնել, և յայնժամ ամենայն ոք զՀաճոյականն յառաջացուցանել կամելով՝ յաճախին յաղդ մեր Պօղոսեան և Ապօղոսեան տարապարհակ կողմնականութիւնք, յորմէ ծնանին յոլով դրամոց վատնումն, և ընդունայն բամբասանք բազմաց, ամօթ և վնասն յաճախ, իսկ օգուտն՝ և ոչ բնաւ։

Զորրորդ՝ մեծ և առաւելն քան զամենայն, յայսմ ժամանակի սոյն տէրութիւն՝ ըստ ամենայնի կապակցեալ ի սէր Ռուսեան տէրութեանն, թէպէտ հրամայեալ է մեզ առնել ըստ նախնական սահմանի մերոյ, բայց մի՛ գուցէ յառաջ քան զամենայն պարագայսն բարեկարգելն մեր, անտի վասն այլոյ ուրուք խնդիր եղեալ՝ յետս ընկրկեսցեն զընտրութիւն և զՀաճութիւն մեր, առ որս անհնար է մեզ բաց ասել կամ ընդդիմանալ։ Եւ զտէրութիւնդ կրկին յայս պատիւ վերադարձուցանել բազում աշխատութեանց կարօտի, և թողուլ ի մէջ աշխարհի թափառական, ծանր է մեզ և ամօթ անտանելի։

Ի լսել սրբազանին զխոհական առաջարկութիւն խորհրդականացն՝ և զճշմարիտ սիրոյ կապակցութիւն ժողովրդոցն առ ինքն, հաճեալ ի բանս նոցին, զայլ ոք ընտրել հրամայեաց և ինքն ընդ նոսա համաձայնիլ յանձն էառ, և Ջանայր՝ գուցէ ի մէջ առաջին մահսարի յիշեցեալ զԵվրեմ արքեպիսկոպոսն ընտրել և հաստատել՝ ըստ որում սիրելի էր ամենայն միաբանից՝ և հարազատ ցաւակից սրբոյ աթոռոյն։

Սակայն խորհրդականքն, և վասն նոյն սրբազան արքեպիսկոպոսի՝ ոչ կարացին հաճութիւն տալ՝ յաղագս Յովսէփ արհեստոյ։

Քանզի ասացին՝ մեք զՅովսէփ արհին ի մէջ այլ տէրութեան լինելոյն պատճառաւ՝ արդ մատուցաք սոյն տէրութեան, թէ զնա ոչ կամիմք մեք, զի՞նչ հրամայէք մեզ. առ այս պատասխան ընկալաք գրով՝ որպէս նախնական սահմանադրութիւն ձեր է, այնպէս շուտով կատարեցէք։

Արդ՝ եթէ այժմ վասն Եփրեմ արքեպիսկոպոսի խնդիր մատուցաք, զառաջինն՝ առ տէրութիւնն խարդախ երևիմք՝ զի Եփրեմ արքեպիսկոպոսն ևս է այժմ ի մէջ Ռուսաց նուիրակ, անտի բերելն դուցէ ծանր թուեսցի։

Երկրորդ՝ և առ Յովսէփ արհին առաւել մախանաց առիթ լինի՝ ըստ որում նա ի կենդանութեան սրբազան Ղուկաս կաթուղիկոսի՝ բազմիցս ասա զրեալ և պատնկութիւն իւր յայն աստիճան յայտնեալ է մեզ, որոյ տակաւին զմանս զրեանն անբաց թողեալ եմք առ մայր դպրատան վարժապետ Տէր Մեսրոպն, որ է բանակատար նորա։ Եւ ահա ի գրութեանց միաբանից յայտ է՝ թէ ի Թիֆլիզ եղեալ զարքայն՝ և զենեբալն և զեշխանան՝ յառաջագոյն զրաւեալ է, մինչև յանուն իւր մահսար առաքեցուցեալ՝ առ որ զոչ այլ ինչ ունիմք բաց ասելոյ զլնաւոր պատճառ, եթէ ոչ ի մէջ Ռուսաց լինելն։ զի թէ զենքն ի բաց թողեալ՝ անդ եղեալ զնուիրակն խնդրեսցուք, պատճառք մեր լինին անզօրք, և առիթք խռովութեանց յաճախին։

Նաև զինքն զՅովսէփ արհին բնաւ երբէք մեք մեզէն, ոչ կարեմք խնդրել՝ յաղագս միաբանիցն առ նա զրեցեալ բանաւոր պատճառաց, իսկ եթէ տէրութիւնն սակս խնդրոյ բրեկամի իւրոյ՝ հրամայիցէ, այն ի կամս իւրն է։ Ապա մեզ պարտ է այժմ զայլ ոք՝ բաց ի յերեքեան սրբազան արքեպիսկոպոսացդ ընտրել և առաքել՝ զի եթէ առանց արդելման գնալ և օծանել կարայ՝ եղիցի սրբազնութեան ձեր եղբայր, և մեզ հայր հոգևոր։ իսկ եթէ ոչ, մեք զհաւատարմութիւն մեր՝ առ տէրութիւնս պահելով, լինիմք հրամանակատարք՝ և անմեղադրելի ի բնաւից այժմ և յապայ։

Իբրև այս ևս հաճոյ թուեցաւ սրբազան պատրիարգին՝ և բազմաց, հարկ եղև տեսանել զառանձնական գրութիւնն միաբանից՝ թէ այլ ոչոյ ցուցեալն զբարեհաճութիւն, գտին ի մէջ քան կնքով գրեալ գրոյ միոյ զանուն կեսարիոյ դէտ նորապսակ Ստեփաննոս արքեպիսկոպոսի, այսպէս։

«Զի եթէ ի մէջ մահսարիցն մեր գրեցեալ սրբազան եպիսկոպոսունքն՝ զանազան պատճառօք ի յարգութենէ ձերմէ անպատշաճ դատեսցեն անուանակոչել, գոնէ զնորապսակ Ստեփաննոս արքեպիսկոպոսն կեսարիոյ՝ բարեհաճեալ առաքեսջիք գալ ի սուրբ աթոռս՝ որ ամենայն յօժարութեամբ՝ սիրով վերապատուեմք զնա Տէր և Հայր ըստ կարգի առաջին սրբազան հայրապետացն։ Որ թէպէտ ի միաբանից մերոց այլ

ևս Ծերունի եպիսկոպոսունք կան թէ ի մէջ սուրբ աթոռոյս որպէս Յովակիմ և Գրիգոր եպիսկոպոսքն, և թէ արտաքոյ՝ որպէս Նուիրակն ձեր Գաղուստ եպիսկոպոսն, բայց գիտեմք թէ նոքա, և թէ այլք վասն Ծերութեանց և զանազան պատճառաց ոչ երբէք կարեն տանել զծանրութիւն սրբոյ աթոռոյս և զկառավարութիւն միաբանութեան մերոյ՝ որոց բարուցն քաջ տեղեակ եմք ամենեքեան»:

Այլև տեսին զայլ յատուկ գիր մի տասն և երկու գլխաւոր եպիսկոպոսաց կնքօք կնքեցեալ՝ որով աղերսեն «Առանձնակի, մեք զդոյն Դաւիթ եպիսկոպոսդ՝ յօժարութամբ մերով ոչ կամէաք մահսարաբեր առաքել յայդր, բայց դա ունելով ասա յԵրևան, եղբօր իւրոյ աներ զմեզիք Աբրահամն, որոյ միջնորդութեամբ, որպէս թէ բռնութեամբն՝ ինքնին եղև յանձնառու ի գալ՝»

«Արդ՝ ահա այսու յայտարարական գրով մերով՝ աղերսեմք, մի՛ գուցէ հայելով ձեր յոլովութեան հերաց, և գեղեցկութեան մօրուացն, անուանակոչեսջիք զդա՝ որ զկնի ընդ խնամոյն իւր մեզիք Աբրահամին միանալով՝ պատճառ աւերման սրբոյ աթոռոյս լինիցի, և զբազմաժամանակեայ միաբանան մեր ցան և ցիր առնեն՝ յորմէ լինիցի ձեզ կամեցողացդ նմա՝ մշանջենաւոր խղճահարութիւն, քանզի նորին բնութեան և կառավարութեանն յոյժ բարեպէս տեղեակ եմք վասն որոյ որպէս յայլում գրոյն եղբայրութեան մերոյ՝ յատուկ գրեալք եմք յաղագս շնորհապերճ Ստեփաննոս արքեպիսկոպոսի, եթէ ի մէջ մահսարիս եղեալ սրբազան եպիսկոպոսքն ոչ լինիցին, զնա առաքել վերստին հայցեմք»:

Զայս ամենայն գրութեամբ յայտարարութիւն՝ երևելի և գլխաւոր միաբանիցն, ի տեսանել և ի լսել պերճապատիւ իշխանաց և խորհրդական անձանց, կամեցան առանց տարաձայնելոյ՝ պատշաճ կերպիւ՝ արկանել զընտրութեան յատկութիւնն ի վերայ յիշեալ Ստեփաննոս արքեպիսկոպոսի, և լինել կատարողք տէրութեան հրամանին:

Բայց և առ այս երևելի իշխանք կեսարիոյ՝ և այլ՝ աղգականք յիշեալ եպիսկոպոսի՝ որք կային ի Պոլիս, գիտելով թէ Յովսէփ արհին ոչ թոյլ տայ այլոյ ումեք յառաջանալ. բա-

զում պատճառս առաջարկեալք՝ հիւանդոտութիւն և այլ ինչ արգելք եղեն և զնոյն անուանակոչելոյ, և ի նոյն օր առանց իմիք հաստատելոյ՝ ցրեցին զլորհրդական ժողով իւրեանց, մինչև զայլ ոք պատշաճաւոր արկցեն ի միտ։

Յաւուրսն այնոսիկ Պոլսոյ նուիրակ Գալուստ եպիսկոպոսն ի 26-ն Մարտի՝ եկն դարձեալ ի Պոլիս, որ զնացեալն էր ի կողմն Նիկոմիդեայ՝ առ ի ժողովել զնուիրական տուրս բարեպաշտ ժողովրդոց, զի վճարեալ էր զՊոլսոյ գործն յառաջագոյն և յայնժամ միայն ի կաթուղիկոսաընտրութեանն ներկայ լինելոյ ցանկութեամբն։ Վերադաձեալ անդ՝ յուսալով, կամ կաթուղիկոս և կամ պատրիարգ հաճոյանան առնել զինքն։ ոչ գիտելով, թէ միաբան եղբարքն իւր՝ ընդ Յովակիմ և Գրիգոր եպիսկոպոսացն դասելով յետս են արկեալ որպէս տեսանի ասա ի վերն յերեսն։

Յաղագս զՆիկոմիդեայ դէտ Բարդուղիմէոս արքեպիսկոպոսն ի կաթուղիկոսութիւն ընտրելոյն, եւ անկատար եղծմանն ի խռովարկութենէ Գալուստ նուիրակին։

(1800—ՌՄԽԹ. Մարտի 30)։

Յետ քանի աւուրց՝ լորհրդական իշխանքն ամենեքեան առանձին ժողովեալք ի մեծ նոր խանն ի սենեակ մի, և կոչեալ անդ զմահտարաբեր Դաւիթ, և զնուիրակ Գալուստ ծերունի եպիսկոպոսն, երդմամբ հարցեալք նոցա՝ վասն Աստուծոյ ասացէք, ի մէջ սուրբ աթոռոյ՝ հին և նոր միաբան յեպիսկոպոսացս՝ ոյք են արժանաւորք կաթուղիկոսական պատուոյ՝ զի և մեք զնա հաճութեամբ ձերով վերակոչեալք ի նոյն պատիւ՝ զխնդիր միաբանութեան ձերոյ՝ զպարտաւորութիւն մեր՝ և զհրաման տէրութեանն կատարեսցուք։ Թէպէտ ի սրբոյ աթոռոյ գրեցեալ յերկու մահտարաց՝ երեք արքեպիսկոպոսք նշանեցեալ տեսանեմք, և այլով գրով՝ զմի ոք ևս, բայց որպէս յայտ իսկ է սրբազնութեանն ձեր՝ ի նոցանէ յիշեցեալ զչորեքեան արքեպիսկոպոսքն ևս՝ բազում պատճառօք ոչ կարացաք ընտրել։ Ուստի ձերդ սրբազնութեան աղերսեմք, զի

ի դիմաց միաբանութեան ձերոյ՝ որք ասա կայք զայլ ոք արժանաւորն ասացէք մեզ՝ զի մի ընտրեցեալն մեր՝ արտաքոյ կամաց աթոռայնոցն երևեսցի։

Պատասխանի եռուն հաստատութեամբ երկոքեան եպիսկոպոսքն, «ճշմարիտ են դրութիւնք միաբան եղբարց մերոց, արդարև բաց ի նշանեցեալ չորեքեան արքեպիսկոպոսաց՝ և ոչ զոք մեք առ այժմ գիտեմք արժանաւորք, ի մէջ սրբոյ աթոռոյն»։

Եւ զբոս նոքա յատկացուցեալք էին, ասա ներկայացէս տեսաք զբարեբոք հետևութիւնս ձեր ի լրութիւն խնդրանաց նոցա, բայց բաղմադիմի գլխաւոր պատճառք ընդ յառաջ ելեալք, արգելք եղեն այնոցիկ։ Այլ ևս կամք յարգութեան ձեր է՝ որոյ վասն բարեհաճիք՝ մեզ և բոլոր միաբանութեան մերոյ՝ լրութեամբ սրտի, հաճոյ և ընդունելի է։

Իբրև ետես և տէրութիւնն, թէ երկարեաց ազգ մեր զընտրութիւն կաթուղիկոսացու ի, կրկին հրամանագիր առաքեաց ի պատրիարգարանն՝ յԱպ։ 9 առանց յապաղելոյ մինչ 13-ն Ապրիլի՝ զի զոք և կամին յատկացուցանել և յայտնել ինքեանց, յատկացուցին։

Վասն այսորիկ հրամանի, ի չորրորդումաւուր Սրբոյ զատկին յԱպ։ 11 դարձեալ ժողովեալք ի նոր խանն, և պատրիարգն ընդ նոսա։ Վերակրկնեալք զանցեալ աւուրց զպատճառսն ոչ յաջողելոյ նոցա ի մէջ մահսարիոյ յիշեցեալ զարքեպիսկոպոսն անուանակոչելոյ, և զառանձնական հարցմունսն առ երկոքեան եպիսկոպոսն սրբոյ աթոռոյն, և զպատասխանիս նոցա, և զնորոգ հրաման տէրութեանն մինչև 13-ն ամսոյն կատարելոյ որոյ վասն թողեալ զզատկական ուրախութիւնսն՝ ժողովեալ են անդ։

Ասացին ցսրբազան պատրիարգն, յայտ է սրբազնութեան քո, որ այնր իշխանութեան, ոչ մեք, և ոչ ազգայինք մեր եմք ընդունակք, միաբանքն վճռաբար՝ բաց ի չորից արքեպիսկոպոսաց՝ զայլ ոք յինքեանսն պատշաճաւոր ոչ լինելն ասացեալք, և երկոքեան ասա զտանեցեալ եպիսկոպոսք, զբանս նոցա վերակրկնեալք։ Ահա բանն առ տէրութեանդ մնաց, եթէ կան ի մէջ սրբոյ աթոռոյն արժանաւոր անձինք՝ յայտնեսա զանուանս նոցա, զորոց զմին յատկացուսցուք, զի մեք զօգտակարն

սրբոյ աթոռոյն խնդրեմք, և ոչ ումեք յատուկ զբարեկամութիւն առնել։

Պատասխանեալ պատրիարքն, այժմ ի մէջ աթոռոյն ոչ գոյ ոք՝ կամք ձեր եղիցի։ Ասացին իշխանքն, ի հեռաւոր տեղիս ձեռնարկելոյ՝ ոչ գոյ մեզ ժամանակ ըստ յայտարարութեան հրամանագրոյն, ասա ի Նիկոմիդեայ եղեալ զԲարդուղիմէոս արք եպիսկոպոսն զՊրպիսի օր գիտես։

Ասաց պատրիարքն, այր քաղցրաբարոյ, գիտնական և ուղղափառ վարդապետ սուրբ եկեղեցւոյ։

Ասեն իշխանքն, բարեհաճիս զլինիլ նորա, կրկնեալ Պատրիարքն, ի սկզբանէ ասացի յարդութեան ձերոյ՝ ըստ ամենայնի համահաւանիմ խոհական դատողութեանցն ձեր, որ ինչ բարի և օգտակար ազգին, և սրբոյ աթոռոյն համարիք, և նուաստութիւն իմ ընդ ձեզ կամ համաձայն։

Ասեն իշխանքն, ուրեմն սրբազնութիւն քո գրեա յիշեալ արքեպիսկոպոսին, և յատուկ նաև առաքեա՝ զալ ասա։ Եւ ի վաղիւն թէսքէրէ առաքեա ամենայն էնաֆիից զլխաւորացն ժողովիլ ի Սուրբ Աստուածածնի եկեղեցին, զամք և մեք անդ՝ և ողորմութեամբն Աստուծոյ կատարեմք զընտրութիւնն, և ի միւսում աւուրն՝ որ է ի տէրութենէն նշանագրեցեալ օրն, արլիւ ծանուցանեմք զանուն ընտրեցելոյն և լինիմք հրամանակատարք նոցա։

Ի զալ սրբազանին ի պատրիարքարանն, յատուկ ձեռամբն գրեաց հրաւիրանաց գիր։ և յատկապէս նաև առաքեաց ի Նիկոմիդեայ առ յիշեալ գիտնական արքեպիսկոպոսն անյապաղ զալ ի Պոլիս։ և ի նոյն օր հրամայեցաւ էնաֆիից զԼխաւորացն, ժողովիլ ի սուրբ եկեղեցին։

Յաւուրն հինգ շաբաթի յԱպ։ 12 ժողովեալ անդ նուիրակ Դալըստ, մահսարարեր Դաւիթ։ Յովհաննէս և Պետրոս եպիսկոպոսք աշակերտք հանգուցեալ Զաքարիայ պատրիարքի Յակոբ եպիսկոպոս վէքիլ սուրբ Երուսաղէմի, և Շօլավերցի Թադէոս եպիսկոպոս՝ վարդապետք, աւագերէցք, աթոռակալք, միւթէվէլլիք, եկեղեցպանք, իշխանապետք, իշխանք և ի բոլոր էնաֆիից զլխաւոր վարպետք, աւելի քան զերկու հարիւր անձինս։

Ի գումարիլ ժողովոյն, բացեալք զվարագոյր սուրբ սեղանոյն՝ ամենեցուն կացեալ յաղօթս, յանձնարարեալք զընտրութիւն շնորհաց սրբոյ հոգւոյն, ասացեալք զսաղմոսն Տէր ապաւէն եղեր մեզն, և նստեալք կարգաւ ի մէջ սուրբ եկեղեցւոյն:

Յարուցեալ Յոհաննէս արքեպիսկոպոսն՝ բացեալ զառաջին մահսարն՝ որ էր ի վերայ անուանց երկու արքեպիսկոպոսաց, այսինքն Տեառն Դանիէլի և Տեառն Եփրեմայ՝ և ընթերցաւ առաջի ժողովոյն՝ ի մէջ որոյ նշանակեալք թէ զայլ որպէսն մեր ի մահսարաբեր Դաւիթ արքեպիսկոպոսէդ կարէք իմանալ՝ օր և ժամ և յառաջ օգնել մեզ և սրբոյ աթոռոյն:

Հարցեալք ցնա՝ այլ զի՞նչ ունիս աթժան այսմ հանդէսի խօսելոյ՝ խօսեաց, զի լուիցուք միաբան: Եւ նա յայնժամ զտարփանք սրտին յայտնելոյ աղագաւ՝ զհակառակն կամաց գրողաց՝ խօսեցաւ այնմ պահու:

«Ես զոչինչ գիտեմ ի բազմալեզու միաբանից՝ քանզի բանք նոցա անհաստատք են, և յայտնի է մեծ ապատուութեան ձերում՝ թէ սուրբ աթոռն առանց զլխոյ է մնացեալ՝ որ ինչ վայել է յարգութեանցն ձեր աղերսեմք առանց յապաղելոյ կատարել և օգնել լուսատու մեր ձերոյ:

Նոյնպէս և Դալուստ արքեպիսկոպոսն ասացեալ, «ի ժամանակիս յաթոռն եղեալ միաբանքն ամենայն ճահիլ ճուհիլք են, և ո՛չ զօգտակար ինչ խորհիլ գիտեն, զուք ընտրեցէ՛ք զօգուտն ազգին և սրբոյ աթոռոյն, որովք թէպէտ յայտնել կամեցան իւրաքանչիւրքն զցանկութիւն իւրեանց առ այն սրբազան աստիճան. բայց ըստ որում յատուկ վասն երկուցն և զրովք զգուշացուցեալ էին յառաջագոյն միաբանքն, որ պատճառ լինել ո՛չ կամեցաւ, զի մի զինի ի մէջ խղճահարութեան մնասցէ»:

Ասեն իշխանքն ցժողովն, եղբա՛ք՝ յայտ է թէ ի մէջ սուրբ աթոռոյն ի ժամանակս այսմիկ բաց ի գրեցեալ՝ և գիտացեալ եպիսկոպոսացն մերոց՝ այլ ոք արժանաւորք ո՛չ են, և անդ զբոտանեցեալ հասարակ միաբանից, և թէ ի ներկայ եղեալ սրբազան եպիսկոպոսաց՝ այս ընտրութիւն հասարակութեան քաղաքիս յանձնեցեալ է, թէպէտ խնդրելն նոցա ի մէջ մահ-

սարի գրեցեալ սրբազան պատրիարգ հայրն մեր՝ և ծայրագուն նուիրակն Ռուսաստանի՝ Եփրեմ արքեպիսկոպոսն են, բայց մեք ի դիմաց ձեր ամենեցուն՝ առանձին աղերսեցաք սրբազան պատրիարգ հօր մերոյ՝ ոչ թողուլ զմեզ որբ և գնալ ի սուրբ աթոռն, որ և սրբազնութեանն լուսալ աղերսանացն մեր՝ հաճեցաւ ի ներկայութեան հովուել զմեզ և ոչ ի հեռուստ։ Եւ զԵփրեմ արքեպիսկոպոսն ընտրել կարելի էր՝ սակայն բազում արդիլական պատճառք եղեն, որ բազումք ի ձէնջ գիտեն՝ վերստին յիշելն չէ հարկաւոր, և զԷդեսարիոյ դէպ Ստեփաննոս եպիսկոպոսէն հիւանդոտ վկայեցին քաղաքացիքն և ոչ կամեցան հանել ի քաղաքէն իւրեանց, և երկիցս հրամայեցաւ ի սերութենէն անյապաղ կատարել զայս ընտրութիւն կաթողիկոսական, դուք զո՞վ կամիք։

Պատասխանեալ հանդէսն՝ շնորհակալեմք ի սրբազան պատրիարք հօրէ մերմէ որ ոչ զանց արարեալ ի դիմաց մեր զալիք սարկութիւնս յարդութեան ձերոյ, բարեհաճեալէ մնալ ի մըխիթարութիւն մեզ՝ և այլոց յինչ և իցէ պատճառաւ ոչ ընտրելն ի կամս ձեր է, բայց թէ այժմ ո՞վ արժան է լինիլ՝ սրբազան պատրիարք հայրն մեր գիտէ, զո՞վ որ կացուսցէ՝ հաճոյ և ընդունելի է մեզ ամենեցուն։

Հարցին, ի միաբանիցն կամիք, թէ յայլ տեղիս գտանեցեալ արքեպիսկոպոսաց։ Ասեն՝ կամք մեծութեան ձերոյ է, բայց ի միաբանիցն լինիլ՝ պատշաճ համարիմք։

Ասեն իշխանքն, մեք ի վաղուց հետէ հետևէաք այդմ, բայց ոչ երբէք կարացաք զհնարն գտանել՝ քանզի աթոռայնոց յանուանէ գրեցեալն ըստ վերոյ ասացեալ պատճառաց ոչ պատշաճ դատեցաք, և վասն այլոց՝ ահա ի ներկայ եղեալ երկու արքեպիսկոպոսք վկայեցին, թէ ոչ գոյ անդ այլ ոք արժանաւոր, և մանաւանդ անտի ևս գրեալէ մեզ՝ բաց ի յատուկ անուանէ գրեցելոց զայլ ոք ի միաբանիցն ոչ ընտրել, զի՞նչ արասցուք եղբարք։

Ասեն ամենեքեան՝ որպէս յառաջ ասացաք, կամք մեր՝ ենթադրեալ է կամաց սրբազան պատրիարգ հօր մերոյ, առ ո՞ր հաճի ինքն, հետևիմք և մեք։

Ապա ասեն ամենեքեան ցսրբազան պատրիարգն, ահա

ըստ ամենայնի տէրութեան քո յանձնեցեալ է այս գործ՝ տեսեալ զարժանին, ի դիմաց միաբանից՝ և մեր, հաստատեալ կարգեա. զի և տէրութեան հրամանի կատարողք լիցուք :

Սասց սրբազանն, դուք տուք զնիւթն՝ ես տեսակաւորեցից՝ բայց մի՛ զբաղում անուանս յիշէք. զի մի կողմնականութիւնք բազմասցին:

Սանն իշխանքն, ըստ որում միաբանքն բաց ի յերից արքեպիսկոպոսացդ՝ զայլ ոք ոչ ընդունիլ գրեալ են ի գիրս իւրեանց. և ըստ հաճութեան նոցա՝ և ոչ զմին կարացաք ընտրել՝ յաղագս զանազան պատճառաց, ահա Նիկոմիդեայ դէտ Բարդուղիմէոս եպիսկոպոսն մերձ է առ մեզ՝ և այր դիտանական, եթէ կամիս, ասա վասն նորա գպահպանիչն:

Սանն հասարակութիւնքն. ի միաբանիցն առնել բարւոք է. և մի՛ խնդրէք զոք արտաքոյ :

Սանն իշխանքն, առ մեզ մի և նոյն են ներքին՝ և արտաքինքն, ամենի է այդպիսի խարութիւն ի մէջ ազգի մերոյ. ոչ ապաքէն սրբազան պատրիարգն ի սուրբ աթոռոյ միաբանիցն ասա առ մեզ է, և մի ոք ասասի դնայցեալ ի սուրբ աթոռն լինիմք ամենեքեան մի սիրտ՝ մի հոգի, և մի մարմին : Բրիստոս զէրէայ և զՀեթանոսն միաւորել Ջանայ. մեք զմիոյ Հօր սուրբ Լուսաւորչի հաւատոյ ծնունդսն զի՞արդ համարձակեսցուք բաժանել : Այլ և ահա տէրութեան երկիցս զբեալ հրամանն ներկայ ունիմք. զայս ընտրութիւն արագապէս կատարել և ծանուցանել ինքեանց : Վասն այսորիկ եթէ կամիս հայր սուրբ ասա վասն Բարդուղիմէոս արքեպիսկոպոսի զպահպանիչն՝ զի հրամանակատար լիցուք տէրութեան, որ վաղիւն ըստ հրամանին՝ պարտիմք զկատարումն յայտնել :

Յոսն կացեալ սրբազան պատրիարգն և հանդէսն ընդ նմա. ասաց վասն Բարդուղիմէոս արքեպիսկոպոսի զպահպանիչն և գնաց վարդապետաց և իշխանաց ի ներքս ի պատրիարգարան : Իսկ այլքն յարտաքս զաղաղակ բարձեալ ասեն, մի կարծէք թէ կատարեցաւ այդ ընտրութիւն, քանզի մեք ի միաբանիցն կամիմք, և ոչ յօտարաց : Եւ այսպիսի աղմկեալ բանիւ ցրուեալք գնացին անտի ,

Բայց իշխանքն ասացեալ ցսրբազան պատրիարգն, մեք յաղագս հրամանի տէրութեանն ժողովեալք այսօր՝ և ի պատրաստի զԲարդուղիմէոս արքեպիսկոպոսն պատշաճ դատեցաք՝ զի մի՝ երկարութեամբ միջոցի կարծիս տայցուք նոցա : Սրբազնութիւն քո տուր զարքն ի դուռն արքունի, զի ծանիցեն զհնազանդութիւնս մեր՝ զկամիլ և զոչ կամիլն՝ այլք պատասխանի տայցեն : Եւ սրբազանն ըստ բանի նոցա յԱպ. 13 գրեաց և առաքեաց ի դուռն : Ցանուն Բարդուղիմէոս երպիսկոպոսի զարքն ընտրութեան :

Առաջին խարդախութիւն մահսարաբեր Դաւիթ եպիսկոպոսի ի Պոլիս։ Եւ նուիրակ Գալուստ եպիսկոպոսի միամտաբար հետեւումն նմա ։

Իբրև սրբազան պատրիարգն գրեալ՝ առաքեաց զարքական գիրն ի դուռն տէրութեան, վասն յիշեալ Բարդուղիմէոս արքեպիսկոպոսի : Տեսեալ մահսարաբեր Դաւիթ եպիսկոպոսն՝ թէ գաղանի խորհուրդն իւր ոչ յաջողեաց, որոյ վասն ինքն ի սրբոյ աթոռոյն միջնորդութեամբ խնամոյն իւրոյ մելիք Աբրահամին, բռնադատեալ զմիաբանսն՝ առեալ զմահսարան՝ եկեալ էր ի Կոստանդնուպոլիս :

Վասն որոյ գիշերայն գնացեալ 'ի սենեակ նուիրակ Գալուստ Եպիսկոպոսի, թելադրեալ զնա զանազան բանիւք, շարժեալ և զնա 'ի վրէժխնդրութիւն, յորմէ հետէ և նա թերակատար թողեալ զնուիրական գործ իւր՝ կաթուղիկոս, կամ պատրիարգ լինելոյ ցանկութեամբն եկեալ էր ի Պոլիս : Որոց և ոչ միոյն յերազի տեսեալ բաղձանքն՝ յաջողեցան :

Պատրեալ ողորմելի Գալուստ արհեստն՝ ի նենգապատիր բանից Դաւիթ եպիսկոպոսի՝ որ ասացեալ նմա, սրբոյ աթոռոյն մերոյ բազմաշխատ ծերունի արքեպիսկոպոսն դու ես, զի՞նչ արժան է թողուլ զհայրութիւն քո, զայլ ոք օտարական բարձրացուցանել յայն պատիւ և այլ բազում բանաքսութեան բարուցն իւրոյ պատական բանիւք, մոռացուցեալ ողորմելոյն զչափ անձին ։

Որպէս ինքն Գալուստ արհին զկնի խնամուտ լինելոյ յայտնապէս չարութեան և նենդութեանն Դաւիթ եպիսկոպոսի, ի Անդրիանուպոլսոյ՝ հանդերձ ի քաղաքին բնակեալ ազգաւ մերով՝ առաջնորդ սրբազան Միքայէլ արքեպիսկոպոսաւ, և գըլխաւոր իշխանօք գրեցեալ յանդիմանական մահսարաւն առ յիշեալ Դաւիթ Եպիսկոպոսն ի 1802 Սեպտեմբերի 30 յայտառնէ որոյ հասցէ փակէթին ձեռամբ Գալուստ արհւոյն գրի այսպէս «Ժամանեսցի թուղթս ի տիրակերտ սուրբ աթոռն Աստուածածէջ և անդ ի ձեռս ինքնամատոյց և ժպրհերես Դաւիթ Բօրչալուեցւոյ ապօրինաւորիդ» և խորագիր սոյն գըրոյ սկսանի այսպէս ։

«Ինքնամատոյց և բարձրամիտ՝ խորդարարոյ և քօղապատառ անարատի հարսին Քրիստոսի, և մնրն հաւատոյ մերոյ սրբոյ աթոռոյն լուսակերտի Դաւիթ Բօրչալուեցւոյդ զեկուցումն լեցի» ։

Ի մէջ այս յանդիմանական գրոյն հատկապէս յիշէ ըզվերոյ ասացեալն իմ՝ այսպէս ։ «Փասքուս ամբարիշտ՝ ի Պոլիս՝ այնքան ի մեր և Դանիէլ արքեպիսկոպոսի մէջ որոմնացան ե. ղեր՝ մինչ զի տարագրեցաք երկաքանչիւրքս՝ որով սուրբ աթոռն մնասցէ ի ձեռս ըբոյդ՝ և որպէս կամիցիս առնել՝ ասասցես» որ ահա այս գիր բոլորապէս ձեռամբ յիշեալ Գալուստ եպիսկոպոսի է գրեցեալ՝ և 53 կնքօք կնքեցեալ՝ որ վկայէ վասն փասքուսութեան՝ և որոմնացանութեան Դաւթի՝ և պատրելոյն իւր ։ Քանզի սոյն յիշեալ Գալուստ նուիրակ գիշերայն 1800 յԱպրիլի 12 խրատեալ ի Դաւթէ՝ և յառաւօտայն կացեալ սուրբ Աստուածածնի եկեղեցին յատեան համաձայնեալ յառաջին օրն զԲաղուղիմէոս արհին ոչ կամեցող խուժանացն՝ եդեալ բնաբան զայս բան առաքելոյն՝ «Եբրայեցիք իցեն՝ և ես՝ Իսրայէլացիք իցեն՝ և ես՝ զաւակք Աբրահամու իցեն՝ և ես՝ պաշտօնեայք Քրիստոսի իցեն՝ առաւել և ես՝ եթէ վաստակօք առաւել՝ և այլն» (Բ. Կրն. ԺԱ. 22. յերեսն 10 ։

Եւ զայս բան լայնելով յատենաբանութեան իւրում՝ թողեալ ի բաց զզրութիւն միաբանիցն՝ որք յատկապէս վասն Դաւիթ և Գալուստ եպիսկոպոսաց ոչ առնել ասացեալք ընդ

վայր դարձուցեալ զյանցանսն ի վերայ դերապատիւ իշխանաց բաղումս նախատանս խօսեցեալ թէ պատրիարգին, թէ իշխանաց, և թէ ըստ ամենայնի իրակութեանց անծանօթ բարդուղիմէոս արքեպիսկոպոսի. մինչ զի առանց կանոնական իրաւանց՝ յայտնապէս նզով կարդացեալ՝ զնա ընարողաց և ընտրեցելոյն. որով ի սիրտ և ի հոգի խոր խոցոտեաց զամենայն խոհական անձինսն :

Մինչ զի իրաւունս ստացեալ՝ ասային իշխանքն, զի՞նչ պարտականութիւն է մեզ հանապազ զբազմապատիկ ծանրութիւն սոցա՝ թէ ի դէպս՝ և թէ յանդէպս՝ ի դրունս այլազգեաց՝ և ի մէջ մեր կրել՝ հետևելով բանիցն իբր ճշմարտութիւն, ոչ այլ իմիք ակնկալութեամբ. եթէ ո՛չ օրհնութեանցն բաղձանօք :

Մթթէ վասն մեր ազգայնոցն մերոց, կամեցաք զիշխանութիւնն զայն՝ որ նուիրակն՝ թողեալ զայսանի զինքեանս ոչ կամեցող միաբան եղբարս իւրեանց, զմեզ առանց իրաւանց ի բերան առեալ ի մէջ ժողովրդոց, նզով ևս կարդաց :

Ո՞վ արդեօք իցէ դա, զնաւիրակութիւն քաղաքիս ի վաղուց լքացուցեալ, և առաքող կաթուղիկոսն վախճանեալ՝ այժմ ի դիմաց ամենեցուն՝ թէ գրութեամբ միաբանից՝ թէ ազգի մերոյ յայլ տեղիս եղելոց, և թէ բարձր հրամանաւ տէրութեանն, ըստ ամենայնի գործն մեզ է յանձնեցեալ. և ի կանոնական գիրս հրամայեցեալէ՝ ժողովն մեծ լինել քան զՀայրապետ և քան զպատրիարգ , Իսկ դա մի հասարակ եպիսկոպոս առանց վիճակի և իշխանութեան, որոյ համարձակեցաւ զժողով՝ և զգլուխ ժողովոյ ի մէջ եկեղեցւոյ նզովել : Եւ կոչեալ ի ժողով իւրեանց զՂափուօղլանի պատրիարգարանին. ասեն՝ երթալ ի դիմաց մեր ամենեցուն համբուրեա՛ զաջ սրբազան պատրիարգ հօր մերոյ. և ասա, այսպէս ասեն իշխանքն, եթէ մեք առանց համահաճութեան նորին սրբազնութեան , և գրութեանց միաբանից, թողաք ի բաց զնոյն վարդապետսն և զայլ ոք ընտել կամեցաք, և կամ այսօրեայ արարք Գալուստ եպիսկոպոսի իրաւամբք իցեն, ծանուցէք մեզ: Իսկ եթէ մեք վասն երկիցս գրեցեալ բարձր հրամանի տէրութեանն խնայելով զաղգ մեր՝ և զսուրբ աթոռն, ջանացաք

հարազատ երևիլ հրամայողացն մեզ։ Եւ Գալուստ եպիսկոպոսին ընդդէմ կանոնի՝ և տէրութեան հրամանի համարձակելոյն յաղագաւ, եթէ սրբազնութիւնն իսկապէս որդի իւր համարի զմեզ՝ խնդրեմք այսօր գրել զարդն նորա, և հանել ի Պոլսոյ զնա։

Ի լսել սրբազան պատրիարգին իրաւամբ զայրացողութիւն դերապատիւ իշխանացն, տրտմեցաւ թէպէտ վասն անպատուութեան Գալուստ եպիսկոպոսին, բայց առ ի զլիջուցանել և սիրտ նոցա, զրեաց այսպէս զարդն, գնալ ի Նիկոմիդեայ Արմաշ եղեալ սուրբ Աստուածածնի վանքն, ըստ որում տակաւին նուիրակութիւն այնր կողմանց կիսատ թողլով եկեալ էր ի Պոլիս, գնալ և կատարել զգործ իւր։ Բայց Ջանայր շահել զսիրտ իշխանաց՝ քաղցրութեամբ առաքել անդ՝ և ոչ թագաւորական հրովարտակաւ։

Սակայն Գալուստ եպիսկոպոսն գիտելով զծանրութիւն մեղայն, յառաջ քան զհնարել պատրիարգին զաղատութիւն նորա, ինքնին փախուցեալ գնաց ի տուն Թարապխանաճի մինաց աղայի ի յՕրթայ գիւղ, և անտի միջնորդութեամբ նորա գտեալ ի Ղալաթիայ՝ զՂրմեցի Աղայեկովեան եաղճի Գէորգն՝ որ էր բանակատար Ռուսի դեսպանին, յորմէ փոխանակ խոնարհութեան, հոգի ընդդիմութեան, և անհնազանդութեան առեալ, գնաց ի Պէկլէրպէկի եղեալ Յակոբ Խալիֆայի տանն թագստեամբ կացեալ ի քանի աւուրս։

Ի նոյն շաբաթ օր յԱպ. 14 եմուտ ի Պոլիս յառաջադոյն հրաւիրեալ Բարդուղիմէոս Արքեպիսկոպոսն, զոչինչ գիտելով զանցից և զդալատենէ իւր, վասն որոյ յելանելն նորա ի Ղումղափու ասացեալ նաւահանգիստն, տեսեալ ծանօթիցն, մուծին զնա ի սենեկի միոյ, և ծանուցին սրբազան պատրիարգին զգալուստ նորա։

Առ ժամայն հրամայեալ պատմաբանիս՝ տարեալ եդի ցիւսկիւտար ի սուրբ խաչ եկեղեցին, մինչև դադարեսցին խռովութիւնք տգիտաց։

Բայց խոհական Բարդուղիմէոս արքեպիսկոպոսի վերահասու եղեալ զվասն ճ՞ր կոչելն զինքն ի Պոլիս, և զընդունայն աղմուկ խուժանացն մայրաքաղաքին։ Իսկ և իսկ զգօնութեամբն

իւր՝ անձամբ անձին հրաժարիլ սկսաւ ցուցանելով զանձն իւր ակար՝ և անզօր՝ ի տանել զայն ծանրութիւն հոգևոր լծոյն։

Եւ ասացեալ՝ եթէ այս ընդդիմութիւն իմ, սրբազան պատրիարգի՝ և յարգի Ամիրայից ծանր համարելով՝ կամեսցին զիս աքսորել՝ յօժարութեամբ յանձն առեալ՝ տանիմ զանձկութիւնսն սիրով, և ոչ զսոյն փառաւորութիւն, օր մի ընդունիմ։ Եթէ զթացեալ առ իս վերստին դարձուսցեն ի վիճակս իմ, մեծապէս շնորհակալ լինիմ ամենեցունց։ Իսկ եթէ զայլ պատիժս պատրաստեն յաղագս անհնազանդութեան իմոյ՝ իրաւունս համարեալ՝ զոհութեամբ ընդունիմ։ և զայլ բազում բանս հրաժարանաց ասացեալ, ի բաց եկաց նա յայնր պատուոյ։ Ուստի գործն, և տէրութեան հրաման, մնաց անկատար ի պատճառս խռովայուզութեան Գալուստ նուիրակի, և որոմնացանութեան Դաւիթ մահսարաբեր եպիսկոպոսի։

Բայց յայնժամ ոչ ոք զգացեալ զԴաւիթ եպիսկոպոսէ զվնաս ինչ, զի այր խորամանկ էր՝ առ երեսս զհաճութիւն ցուցանէր և զկնի ի գործոյն ծանուցեալ՝ և դրով Գալուստ եպիսկոպոսի յայտնեալ։ Որպէս գրի յերեսն 15։

Պիտի շարունակուի։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

Թէ ինչ-քան հարկաւոր է քրիստոնէութեան վարդապետութիւնը և բարոյականը դաստիարակութեան մէջ. թէ ինչ եղանակաւ և ինչ տեսակների վերայ է աւանդվում մարդկային կենաց այս կարեւոր ուսմունքը մեր դպրոցներումը, և թէ ինչպէս պէտք է աւանդուէր :—.

Մեր արդոյ ընթերցողքը պէտք է նկատեն անշուշտ, որ մենք համարձակվում ենք խօսել այնպիսի մի վեհ առարկայի վերայ, որ ի վեր է մեր կարողութենից : Մենք էլ քաջ զգում ենք, որ արդարև ամենայն մարդ չէ կարող հոգևոր նիւթոց վերայ խորհրդածել արժանապէս, այլ միայն նոքա, որոնք հոգւով և մտօք զոզցեալ վերացած երկրից՝ ապրում են մի երկնաւոր հոգեզմայլութեան մէջ : Սակայն այս տեսակ երկիւղն և վեհերոտութեամբ պաշարուիլը էլ մի փառք և պատիւ չէ քրիստոնէի կոչմանը : Ուղիղ մտածելով՝ ամենայն քրիստոնեայ պատրաստ պէտք է լինի. «Ցալ պատասխանի ամենայնի որ խնդրիցէ զբան, որ է վասն յուսոյն» : Ուստի այս պարտաւորութենից ստիպուած վատահանում ենք բանալ մեր սիրտը մեր եղբայրակիցների առաջ՝ քրիստոնէական դաստիարակութեան մասին՝ այնքան և այն չափով, ինչքան զգում ենք: Եւ մեր ճանաչողութիւնն և զգացածը դրում ենք, ոչ թէ մի բռնի օրէնք և կանոն դնելով ուրիշների համար, այլ իբրև մի մանաւոր սրտի զգացմունք և մտաց ճանաչողութիւն, այժմն իսկ խնդրելով մեր բարեխոհ ընթերցողներից, որ դատեն և այնպէս ընդունեն մեր ասացուածը և ոչ կոյր զկուրայն, զի մի՛ դուցէ փոխանակ մի քրիստոնէական հոգևոր սատա-

բութեան՝ դայթակղութեան առիթ լինենք մեր մերձաւորին, որ հեռի է խսպառ մեր զգայմունքից և գրութեան նպատակից։ Մենք ստիպվում ենք խօսել և գրել քրիստոնէական կրօնի վսեմութեան վերայ, ոչ թէ մեր հանճարը և Աստուածաբանական հմտութիւնը ցոյց տալու և գովեստներ յափշտակելու. քաւ լեցի, այլ մեր մերձաւորին, մեր ազգակցին և եղբօրը ըստ չափու մեր հասկացողութեան օգտակար լինելու և խորհրդածութեան առիթ տալու։ Այս է մեր գրութեան շարժառիթը Աւետարանի դաստիարակութեան մասին։

Քրիստոնէութիւնը, սիրելի ընթերցողք, ինչպէս մտածում են մեզանից շատերը, մարդկային ճարտարութիւն չէ և զիտութեան դիւտ, քրիստոնէութիւնը դաստդութեան և իմաստասիրութեան արդասիք չէ։ Քրիստոնէութիւնը՝ բան չէ և խօսք, նա ՀՈԳԻ է և ԳՈՐԾ։ Ինչ օրից հնչուել է աշխարհի մէջ Աւետարանի այն դեղեցիկ խօսքը՝ «Բանն մարմին եղև և բնակեաց ի մեզ», այնուհետև և վճռուել է Աստուածային վըճռով և անօրէնութեամբ, որ քրիստոնէութիւնը շօշափելի լինի մարդկութեան մէջ, մարմին առնի քաղաքականութեան մէջ, օրէնսդրութեանց մէջ, ընկերութեան և հասարակութեան մէջ, ազգայնութեան և ընտանեաց մէջ, մեր գործոց և արարմանց մէջ, մեր վարուց և շարժմանց մէջ։ Ինչ ընկերութեան կամ ազգի մէջ, որ քրիստոնէութիւնը խօսվում է իբրև բան, իբրև շրթունքի յօդուած ու չէ կատարվում իբրև գործ, նշանակում է այն տեղ տակաւին չէ մարմին առել քրիստոնէութիւնը։ Նշանակում է այն տեղ քարոզվում է իբրև բան միայն և շրթունքից շրթունք է թռչում առանց մի փրկարար փոփոխութիւն յառաջ բերելու մարդու հոգւոյ և վարուց մէջ։ Քրիստոնէական դաստիարակութիւնն է առնել եւ ուսուցանել, միասին ուսանիլ և գործել, առանց գործոյ աւետարանական դաստիարակութիւն չկայ։

Մեր ժամանակումս հանապազօր կրկնուող խօսքը—լուսաւորութիւն, որ Եւրոպայումը քարոզվելով արձագանք է տալի և մեր Ասիացիներիս մէջ, լուսաւորութիւն, որ կրկնվում է անդադար մեր օրագրների և լրագրների մէջ, որ հնչվում է մեր ընկերութեանց մէջ, մեր դպրոցական կանոնագրութեանց մէջ,

մեր ապագայ սերնդոց դաստիարակական խորհրդածութեանց մէջ. լուսաւորութիւն, որ հասարակաց բերանի խօսք է դառել թէ մեծի և թէ փոքրի, թէ աղնուի և թէ ռամիկի համար, ուրիշ բան չէ՛ այս լուսաւորութիւնը, եթէ ոչ քրիստոնէութիւն գործով, ուրիշ բան չէ՛ եթէ ոչ քրիստոնէական լուսով պարզուած և լուսաւորուած խորհուրդներ, զգացմունքներ, գործքեր, նպատակներ, մեր կենաց անցեալ, ներկայ և ապագայ վիճակի գործնական հիմը և խորհուրդը : Ներեցէ՛ք ինձ աւելի պարզ ասել, ճշմարիտ լուսաւորութիւն և ճշմարիտ քրիստոնէութիւն՝ նոյնիմաստ և նոյնանշան բառերեն և ոչ տարբեր : Մի՞թէ ուրիշ լոյս կայ բացի այն քրիստոնէութեան լոյսը. «Որ լուսաւոր առնէ զմարդ, որ գալոց է աշխարհ» : Այս է ահա համառօտիւ քրիստոնէութեան վսեմ խորհուրդը. այս է ահա, որ պէտք է լինի մեզ—քրիստոնէիս համար, ճանապարհ, կեանք և ճշմարտութիւն.—ճանապարհ ուղղութեան, ճանապարհ արդարութեան և յառաջադիմութեան. կեանք վարուց և գործոց, կեանք ընկերութեան, կեանք աղգութեան և մարդկութեան, ճշմարտութիւն բանից, ճշմարտութիւն մտածմանց, ճշմարտութիւն խորհրդոց, ճշմարտութիւն դիտութեան, միով բանիւ լոյս կամ լուսաւորութիւն : Ո՛վ այսպէս չէ ըմբռնում քրիստոնէութիւնը, նշանակում է նրա համար տակաւին լոյսը խաւարում է և չէ՛ տեսնում նորա պայծառութիւնը իրան խաւար աչքերով. Աւետարանի խօսքին համեմատ, թէ. «Լոյսն ի խաւարի էր և խաւար՝ նմա ոչ եղև հասու» :

Այսպիսի մի վսեմ առարկայ առիթ է տալի ահա մեզ այսօր խորհրդածութեան, թէ ի՞նչ ճանապարհով ենք դիմում դէպ ի այս լոյսը, ի՞նչ վաստակ են վաստակում մեր դպրոցները այս լուսոյ համար և ի՞նչ ձեռնակների վերայ է աւանդվում մարդկային կենաց այս վսեմ ուսմունքը : Մենք պէտք է խորհրդածենք ըստ չափոյ մեր կարողութեան, միանգամայն ներողութիւն խնդրելով քրիստոնէական դաստատուներից և դասագիրք յօրինողներից, որ մեր խօսքը հասարակաց օգտի համար է և ոչ այս ինչ, կամ այն ինչ անձի աշխատութեան վերայ մռայլ արկանելու :

Այնպէս ուսմունք, եթէ չէ՛ դիմում ուղղակի դէպ ի

իրան նպատակը, յետաձգվում է և մոլորվում և շուտով չէ հասնում իրան կատարածին։ Այսպէս էլ պատահում է, որ քրիստոնէական դաստիարակութիւնը անհմուտ մարդկանց ձեռքով խոտորվում է իրան ճանապարհից։ Արդարև նա չէ կորնչում խաւարի և տգիտութեան մէջ, բայց շուտով չէ հասնում իրան նպատակին և չէ ցոյց տալի իրան փրկարար զօրութիւնքը։

Քրիստոնէութիւնը, որ կեանք է ընկերութեան կամ հասարակութեան, մտել է այժմ դպրոցական ուսմանց կարգը։ Շատ ուրախալի բան է, ի հարկ է, որ եկեղեցական բեմի վերայ բարձրացած քրիստոնէութիւնը, թագաւորական դահոյքի վերայ բազմած, աղքատի խրճիթին ոչ ցելու և հիւանդի վրշտացը սփոփիչ քրիստոնէութիւնը, ամբիոն ունենայ իրան համար դիտութեանց ու արուեստից տաճարի մէջ և իրան փրկարար բաղուկները տարածի մանկական անմեղ հասակի վերայ, բայց այս տեղ ամէնից զգուշաւոր և խորհրդաւոր տեղին է։ Ծերերը և հասակաւորները արդէն աշխարհ են մտել և կեանքի հետ ծանօթացել, նրանց թշուառութիւնները, հանապազօրեայ փորձերը և ամօթապարտ կրքերից զզջումները ուսուցել են նրանց համբուրել քրիստոնէական կրօնի մխիթարութիւնները։ Իսկ անմեղ մանկտին, որ պէտք է նոր աշխարհ մտնի և այն էլ իբրև ուսեալ քրիստոնեայ, իբրև դաստիարակութեան դաւթից նոր ելանող անդամ մարդկութեան, հարկաւոր է նրան չըմոլորեցնել նախապաշարմունքների մէջ, թիւր ուղղութեանց մէջ, ուսից ուսման և կրթութեան անունով մոլորութիւն կարող է տարածել հասարակութեան մէջ, այլ հարկաւոր է քրիստոնէութեան և բարոյականութեան բաղմաբեղուն սերմերը նոյն իսկ դաստիարակութեան պաղաբերող արեգակի տակ ծաղկեցնել և պտղաբերել։

Քրիստոնէութիւնը՝ ինչպէս հասարակութեան մէջ, նոյնպէս և դաստիարակութեան մէջ կեանք պէտք է համարել և ոչ միայն լոկ ուսմունք, և էս ինչից կարող է յառաջ գալ՝ եթէ ոչ դասական բարի եղանակից, քրիստոնէական ընտիր դասագրքերից, և մանաւանդ դաստիարակի գործքից։

Մեր դպրոցներումը, որչափ մեզ յայտնի է, թէ եղանակն, դասախարակութեան և թէ դասագիրք՝ չեն կատարում իրանց պաշտօնը։ Չեն կատարում ասում ենք, և բաւականին յանդուգնդն խօսք պէտք է երևի մեր ասածը շատերին, բայց երբոր բանը ապացոյցներով կ'պարզենք, յուսանք թէ համոզուին և մեր ընթերցողները։ Ո՞րն է այժմ մեր ուսումնարաններում գործ դրուած կրօնական դասախրակութեան ձևը և եղանակը, որո՞նք են դասագրքերը, ի՞նչ եղանակաւ շարադրուած են նրանք, ի՞նչ աղբուրներից քաղած, հայկական է արդեօք նրանց դասական ուղղութիւնը, թէ նորամուտ, ընդհանո՞ւր է արդեօք նրանց քրիստոնէական նպատակը, թէ մասնաւոր անձնականութեան կարծիք, այս հարցմունքները ամենից առաջ պարտաւոր ենք համարում այս տեղ լուծել։

Դասախարակութեան եղանակը առաջին պայմանն է ընտրելու և բարեկարգելու ամենայն դպրոցների մէջ և մանաւանդ քրիստոնէական դասախարակութեանը, որ հիմն է ամենի և սկիզբն։ Մեր դպրոցներումը բարձի թողել է արած այս կարևոր և գլխաւոր պայմանը։ Քրիստոնէութիւնը որ մի ընդհանուր ուսմունք է, դառնում է մեր դպրոցներումը թուաբանական հարցմունքեր. նա չէ մտանում ամենևին աշակերտի սրտին, այլ միայն դառնում է շրթունքի հատուածական յօդուած։ Քրիստոնէութիւնը, որ պէտք է իւր երկնային վառ բոցովը և կայծակովը սրբէր մաքրեր աշակերտի յօժարութիւնքը, զգացմունքը, ցանկութիւնքը և մի հրով մաքրուած անդամ պէտք է յառաջ բերէր ընկերութեան մէջ, դառնում է նորա համար մաքի մի հասարակ ծանօթաբանութիւն։ Նա դառնում է նորա համար արդէն մարդկային ուսմանց մի մասը և շատ անգամ, ամաչում ենք ասել, ցածրանում է և նրանցից։ և ի՞նչն է սրա պատճառը, եթէ ոչ դասական եղանակը։ Հաստատութիւն են ահա մեր ասածին քրիստոնէական տետրակները և սրբազան պատմութիւնները, որոնցից առաւել գործադրականքն են Մսերայ մագիստրոսի յօրինուածներն, Ալամդարեան վարդապետինը, Օրբելի և Սահա-

ռունի աւագ քահանաներինը*, թողնում ենք Պ. Նազարեանցի վարդապետարանը և Գեր. Այվազեան վարդապետինը, որոնք գործ չեն դնվում և բանախօսութեան ևս առիթ չեն տալի մեզ։ Ողբմելի աշակերտը հենց քրիստոնէական ուսման սկզբումը կամ պետք է լսի Մսերի երկարապատում և շատ անգամ պատասխանից աւելի հարցմունքները։— Ավետարան բառդ զինչ նշանակէ։ Ով էր Քրիստոսի հայրն։ Յիսուս ինչպէս աւանդեց իւր հողին Ո՞մ տուաւ զպատառն, եւ այլն։ Կամ թէ այն հեղինակի աւելի ընդարձակ հրահանգից պէտք է կրկնի։—Ով է նախկին հիմն եւ բուն հեղինակ քրիստոնեական հաւատոյ, Զինչ է Աստուած. Աստուած յումմէ եղեւ։ Զինչ է անունն Աստուծոյ։ Է՞արդեօք եւ այլ Աստուած ճշմարիտ։ Աստուածային անձինք քանի են։ Երիս աստուածս պարտիմք դաւանիլ կամ երիս Աստուածութիւնս։ Զինչ ուսուցանէին Սաբէլ, Արիոս, Մակեդոն։ Զինչ է մարդեղութիւն Աստուածորդւոյն։ Յիսուս Քրիստոս, Էմմանուէլ յորմէ լեղուէ են այդ բառք, Եւ դեռ ևս խորհրդների վրսնութիւնը չհասկացած, հաստատութիւնը միայն պետք է լսի աշակերտը։— Թէ Երբ սահմանեաց զխորհուրդ մկրտութեան, օծման, կամ Երբ

* Այս բարձրապատիւ անձինքը պէտք է ներեն մեզ, որ մերկացնում ենք մենք այսպէս ճշմարտութիւնը։ Մեր խօսքը նրանց ադգի համար լոյս ընծայած ձեռնարկների վրայ է եւ ոչ թէ նրանց պատուոյ, վասն զի ինչ որ վերաբերում է պատուոյն, մենք նրանց պատուել ենք եւ կըպատուենք. իսկ ինչ որ վերաբերում է նրանց ձեռնակներին, համարում ենք բոլորովին զուրկ քրիստոնէական դաստիարակութեան եղանակից եւ յուսանք, որ իրանք ևս համոզուին մեր խօսքերից։ Մենք չուզեցինք նոցա ձեռնարկները առանձին առանձին երկարօրէն քննել, թէ որչափ թերութիւններ են գտնվում նոցա մէջ։ Եթէ հարկը կըպահանջի, պատրաստ ենք այս տաժանելի աշխատանքն ևս յանձն առնելու։ Միայն այսքանս ասում ենք որ արդոյ Մսերը հայկական է եւ ոչ աստուածաբան, Ալամդարեանը կարելի է ասել բանաստեղծ է եւ ոչ քրիստոնէականի ուսուցիչ, ինչպէս երեւում է, որ դիրն էլ թարգմանութիւն է։

Իսկ Օրբելին եւ Սահառունին ոչ մինը եւ ոչ միւսը, սոքա լոկ թարգմանողներ են եւ նմանողներ։ Հանդուցեալ Ալամդարեանի երգերը՝ իրան անունն առաւել են յաւերժացնում, քան իրան քրիստոնէական տեսարակը։ Արդոյ մաղիստրոս Մսերը ևս անուն կըթողի գրականութեան մէջ՝ եթէ փոխանակ այս քրիստոնէական հրահանգներին, աշխատասիրի գրաբառ ընթերցանութեան մի ընտիր գիրք, եւ այն վեր առնելով նիւթերը պատմական եւ բնական աղբիւրներից, վիպասանութիւններից, որոնք ներկայ ժամանակումս շատ են տպուում օրագիրների մէջ. բայց աշխարհիկ լե-

թուի լինիլ հաստատեալ։ Եւ որ ամենից սարսափելին է թէ. քանի օրինակ գործին մեղք, ի քանի տեսակս բաժանին, ամենայն մեղք ընդդէմ են Աստուծոյ, և այլ այսպիսի տարտամ և տարապայման հարցմունքներ։ որ թողնում ենք մի առ մի գրել։ Ողոմելի աշակերտը կամ պէտք է լսի Ալամդարեանի թէական հարցմունքները*. — Ջինչ ուսուցանէ վարդապետութիւն քրիստոնեական։ Ջինչ իմանամք անուամբս Աստուած։ Եթէ գոյ Աստուած, վասն էր եղրակացուցանեմք թէ արարած էր աշխարհս։ Մթէ ամենայն արարածք հաղորդին բարութեան Աստուծոյ։ Ջինչ է Աստուածապաշտութիւնն։ Ջինչ կայ ի հին կտակարանի։ Աստուածաշունչ գիրք հաստատեն զգոյութիւն Աստուծոյ։ Եւ արդ երեք անձինքդ երեք աստուածք իցեն։ Ջինչ է հոգի մարդոյ, մթէ այդպէս իցեն և հոգիք անանցոց, ցումմէ աւանդեցաւ Տէրունական աղօթքն։ Այս գյառաջաբանութիւն։ Ջինչ է անաստուածութիւնն, կեղծաւորութիւնն, անձնասպանութիւնն, մնապաշտութիւնն, ամբարշտութիւնն, ծուլութիւնն։ Ո՞րպէս գրի չորրորդ կամ հինգերորդ պատուիրանն։ Մեղք ի քանիս բաժանի։ Ջինչ (է հերձուածն։ Մի օրինակ յարգոյք են ամենայն խորհուրդք։ Երբ եղիցի երկրորդ գալուստն Քրիստոսի։ Ընդդէմ յամենցուցանէ Քրիստոս

զուաւ են։ Այսպիսի մէկ գիրք հարկաւոր է մեր դպրոցներին. վասն զի մեր նախնական ընթերցանութեան գրքերը բոլորը վսեմ նիւթերի վերայ են գրուած եւ անհնարին է լինում ծառայեցնել իբրեւ դպրոցական դասական գիրք։ Օրբելին կարող է հետեւիլ աւելի ընտիր ձեռնարկութիւնների, միշտ ասացի ուշադիր սենենալով հայկական եկեղեցւոյ վարդապետելու ձեւը եւ այնպէս յարմարելով իւր աշխատութիւնը։ Իսկ բարձրագոյն Սահմանուոյ թարգմանական աշխատասիրութիւնը առաւել կարող է զժուարացնել ուսումը քան թէ դիւրացնել, վասն զի ոչ միայն դասախարակական եղանակ չկայ մէջը, այլ հայերէնը ևս շատ անհեթեթէ։ Այս մի քանի բառերից կարող էք մակաբերել, որ նումենք ահա այս տեղ նորա գրքից — յատկորինութեամբ, փոխանակ (յատկութեամբ) անդեղեայս փոխանակ (տգեղ) քաղցրաշարժիլ, փոխանակ մեղմիլ կամ շարժել ի գութ) ահապատեցան, փոխանակ (երկեան) արծաթափոխատուն, փոխանակ (փոխատուն արծաթոյ) մօտակալուտ փոխանակ (մօտալուտ կամ մերձակայ) ոչանսացողութիւն, փոխանակ (անհնազանդութիւն) սլիտեվանէ, փոխանակ (պէտք է, ոչնչաքեայ, փոխանակ դուղնաքեայ կամ առ ոչինչ համարելի)։ եւ այլն։

* Եթէ, եթէ գոյ Աստուած, մթէ, իցեն եւ այլն։ Հացմունքները մենք քաղել ենք միշտ դասական գրքերի զանազան երեսներից, որ համեմատութեամբ կարդացողը կարող է նայնութեամբ գտանել, թէպէտ եւ այս ու այլ երեսները չէ նշանակած։

զերկրորդ գալուստն։ Միմիայն Քրիստոս եղիցի զատուոր աշխարհի։ Ո՞ր պատուիրանն է եօթներորդն, եւայլն։ Կամ պէտք է լսի իբրև սրբազան պատմութեան դաս՝ Օրբելի քահանայի կցկտուր և թերի հարցմունքները—Աշխարհքս ով ստեղծեց. ինչից ստեղծեց, ինչի համար ստեղծեց. դրախտն ինչ բան էր. հրեշտակ բառն ինչ է նշանակում։ Ի՞նչ է սատանէն. Աստուած ինչ պատիժ տուաւ սատանին. սատանի բան ու գործը ինչ է. սատանէն ինչպէս փորձեց մարդուն։ Աբրահամու որդին ով էր։ Յովսէփին ինչ բան պատահեցաւ։ Պատուիրանքները գրուեցան թէ ոչ։ Անապատի մէջ Իսրայէլացիք քանի՞ անգամ հակառակեցան Աստծոյն։ Ի՞նչ բան է կուռքը։ Ի՞նչպէս էին պաշտում։ Ի՞նչ ասել է Քրիստոս կամ Մեսեայ։ Երուսաղէմայ տաճարը ով չինեց. ինչու համար մէկ հատ էր տաճարը։ Սողոմոն մինչէւ մահն իմաստուն մնաց թէ ոչ։ Ե՞րբ Սողոմոն մեռաւ ինչ պատահեցաւ։ Յիսուսի մայրը ով էր. Ո՞ւմ հետ էր նշանուած։ Յովհաննէս ում որդի էր։ Ո՞ւր էր բնակվում. Յիսուսին էլ մկրտեց։ Երբոր մկրտեց ինչ էլաւ. Աղօթք էլ անում էր Յիսուս թէ ոչ. Յիսուսին հետեւող էլան թէ ոչ. Յիսուս թշնամի ունէր, թէ ոչ։ Ո՞վ էր Յիսուսի մատնիչը. Յիսուս ո՞ր ժամանակ մեռաւ. ինչպէս մեռաւ. Յիսուս էլի պիտի գայ աշխարհ։ Ո՞վ է առաջին Մարտիրոսն. ինչ է նշանակում բառս մարտիրոս. եւ այլն։

Կամ Սահառունի քահանայի աղաւաղ հայկաբանութեամբ թարգմանած Ծբ. Սուրբ Պատմութիւն վերաձայնելը — Զինչ մեքատի ուսանիմք, զինչ մեք աստի յայսմանէ ուսանիմք, զինչ յայսմանէ զհետ գայ. զինչ աստէն եղբակացուցանի, զինչ յայսմանէ մակաբերի։ Մարթ է զայն եւս տեսանել, թէ ով զառաջինն եմոյծ յաշխարհ զստութիւն։ Զինչ պարտ է խորհիլ ի զգնալն մեր յայգւոջ։ Զինչ աստէն ճանաչեմք։ Զինչ մարթիմք աստի ուսանիլ։ Սատանայ ոչ զոր կամի կարէ առնել. այլ զայն եւ եթէ զոր թոյլ տայ նմա Աստուած։ Վտանգաւոր է յանձնել կանանց զգաղտնիս։ և այլն և այլն և այլն։ *

* Սահառունի քահանայի թարգմանական աշխատասիրութիւնը տպագրուած է Էջմիածնում 1838 ին եւ վաճառվում է հողեւոր վարչութեան ձեռքով։ Ալամդարեանինը տպուած է Տիփխիսում 1847 ին եւ վաճառվում է նոյնպէս. իսկ Մսերի ընդարձակ Հրահանգը տպուած է Մոսկովայում 1850 ին-միւս աշխարհիկ լեզուաւ գրածները նրանից յետոյ եւ վաճառվում է իբրեւ իրան սեպհականութիւն։ Օրբելի քահանայինը պտուած է Տփխիսում 1856 ին։ Տպագրութեան տարիներից երեւում է, որ բաւական ժամանակ է գործ են դնվում դպրոցներում այդ աշխատասիրութիւնները եւ զարմանում ենք, թէ ինչպէս փորձը գոնեայ չը-ցոյց տուեց դրանց թերութիւնները եւ ուղղութիւն պահանջեց։

Այսպիսի եղանակաւ գրած ձեռնարկներն են ահա՝ սիրելի ընթերցողք՝ որոց վերայ դասեր են աւանդվում՝ որոնք մեր մանկանց քրիստոնէական և բարոյական ուսմանց հիմն են համարվում։ Ողորմելի աշակերտը ամբողջ տարիներով լսում է այս հարցմունքները՝ քրիստոնէական ուսման ուրիշ դասական աղբիւր չունենալով կրկնում է և երեք կնում՝ թէ հարցմունքները և թէ նրանց պատշաճ անտեղի պատասխաններն և անգիր աւարտելուց յետոյ՝ այն ինչ կարծում է թէ՝ քրիստոնէական ճշմարտութեանց ծայրն է հասել՝ յետ է նայում իւրեան եկած շաւիղի վերայ և անգիր սերտածը մոռանալուց յետոյ՝ գտնում է միայն ունայնութիւն ունայնութեան։ Տեսնում է իրան սիրտը անապատ՝ ամայի և այն անդունդը՝ որ բաժանում է մարդուս Աստուածանից՝ մթին և բերանաբաց՝ չէ լինում ծագած նորա մէջ քրիստոնէական լոյսը։ Չէ լինում լքցուած քրիստոնէական վեմ խորհրդներով՝ առաքինի զգացմունքներով՝ ազնիւ մտածմունքներով և տեսնում է իրան առաջին տակաւին այն պատուարը կանգնած՝ այն եդեմական դուռը փակուած՝ որ արգելում է մարդուն տեսնել և զգալ Աստուծուն և միանալ նորա հետ։

Էլ ուր է մնում այնուհետև քրիստոնէական ուսման նպատակը՝ որ պէտք է միացներ մարդուս Աստուծոյ հետ՝ որ պէտք է ճաշակէլ տար նրան Աստուծոյ քաղցրութիւնը՝ վայելչութիւնը և մեծութիւնը և պէտք է իրան կեանքը ազնուարար կատարելագործվէր որպէս և Հայրն երկնաւոր կատարեալ է։ Էլ ուր է մնում այն դաստիարակական ընտիր եղանակը՝ որ պէտք է զարթնացնէր աշակերտի հոգեկան զօրութիւնքը՝ սրբէր նրանց և երևացնէր նրանց մէջ Աստուծոյ պատկերը՝ Աստուծոյ նմանութիւնը և մեծութիւնը։

Եթէ քրիստոնէութիւնը կամ Աւետարանի ուսումը հարցմունքով սովորելու լինէր՝ եթէ քրիստոնէութիւնը կայացած լինէր միայն բառերի վերայ՝ այնուհետև պէտք էր բոլոր Աստուածաշունչ մատնի ամէն մի բառի վրայ մի քանի հարցմունք շինուէր։ Մատիր մի անգամ՝ սիրելի ընթերցող՝ թէ այսպիսի հարցմունքներով քրիստոնէութիւն ուսանիլ կըլինի և սա կաւ

է մնում՝ որ քրիստոնէութիւնը բառարան չունի՝* ։ Բայց մենք ասում ենք՝ որ քրիստոնէական ուսմունքը բառարան չէ՝ նա մի երկրաչափական գծերի գիտութիւն չէ և ոչ տառ կամ գիր՝ այլ հոգի։ «Գիրն սպանանէ՝ ասում է Պօղոս Առաքեալը՝ այլ հոգին կեցուցանէ»։ Քրիստոնէական հոգին պէտք է հասկանայ աշակերտը՝ քրիստոնէութեան խորհուրդը՝ Աւետարանի նպատակը և պատուէրները՝ որ կարողանայ ապրիլ ապա թէ՞ ոչ՝ գիրը նրան կ'սպանի ։ Երբոր հոգին զգաց՝ հոգւով սկսեց ապրիլ՝ այնուհետև շատ դիւրին կըլինի նորա համար հասկանալ և գիրը ։ Մոռացանք ասել՝ որ անտեղի հարցմունքների պատասխանների հետ բարդում են բազմախուռն վկայութիւններ Սուրբ գրքից և սուրբ վարդապետաց գրուածքներից և այս համարում են մի մեծ հմտութիւն աստուածաբանական գիտութեանց մէջ ։ Սուրբ գրքի այն գեղեցիկ վկայութիւնները ևս մնում են մեռած անկենդան։ Իրանց հարցմունքներին յարմարացնում են՝ ինչպէս կամենում են և շատ անգամ վկայութիւններն աւելի շատ՝ քան բացատրութիւնները։ Սուրբ գրքի ազնիւ և հոգեվից տողերն արմատից և ծայրից կտրած ծառի ոստերի պէս մնում են չոր ու ցամաք ։ Ա՞յս է արդեօք քրիստոնէութիւն ուսուցանելու եղանակը ։ Այսպի՞սի բառերով՝ բաներով պէտք էր զբաղուէին մեր դպրոցները։ Ոչ՝ սիրելի ընթերցողք՝ այս ոչ Հայկական եկեղեցւոյ վարդապետութեան ձև է և ոչ քրիստոնէական ուսման ։ Սրանով չենք ուզում ասել՝ թէ արդոյ հեղինակները աղանդաւոր են կամ անհարազատ իրանց եկեղեցւոյն՝ քաւլիցի՝ այլ միայն ասում ենք՝ որ նոքա անտեղեակ են դաստիարակութեան ոճոյն և եղանակին և ճշմարտութիւնները այնպէս խառն ի խուռն կերպով են դասաւորում՝ և այնպէս անկապ և տարտամ կերպարանք են տալի՝ որ ուսանողի համար մի տղայական խաղալիք է դառնում և անհնարին է՝ որ այս չ'լինի՝ վասն զի Աստ-

* Տես այս հարցմունքները—՝ Աւետարան բառս զինչ նշանակէ՝ որ լեզուի բառ է Յիսուս եւ զինչ նշանակ է՝ զինչ նշանակ է Կարապետ բառդ՝ Զինչ նշանակ է բառդ առաքեալ՝ զինչ նշանակ է Ովսաննայ բառդ եւ այլն՝ (Մանր ուսմունք սրբազան պատմութեան Աւետարանի գրեալ ի Մսերայ Մաղիստրոսէ)։

գարեանը և Սահառունին թարգմանել են Ռուսական հին բնագրերից, որոնք նոյն իսկ Ռուսաց վարժարաններուն անգործածելի են այժմ. իսկ Մսերը և Օրբելին հետևողութիւն են անում նմանապէս Ռուսաց մանր մունր դասագրքերի, որոնք օր աւուր հերքվում են դաստիարակութեան հմուտ գիտնականների անաչառ նկատողութիւններով և բանադատութիւններով: Աղանդաւորների Սաբելի, Արիոսի, Մակեդոնի և այլոց և այլոց անունները (որոնք եկեղեցական պատմութեան տուարկայ են) առաջ բերել քրիստոնէական տետրակների մէջ և հերքումներ դնել նշանակում է աշակերտին վիճաբանութիւն սովորցնել և այս վիճաբանական հոգին յունական և և կաթոլիկական հոգի է և ոչ Հայկական: Բաց ի աղանդաւորաց վարդապետութեանց կրկնութիւնը զարհուրելի է նմանապէս յիշեալ տետրակների մէջ մեղքերի երկարուբարակ հարցմունքները և բաժանմունքները, թէ. քանի տեսակ են բաժանվում մեղքերը, Չինչ է կեղծաւորութիւն, անձնասպանութիւն, ամբարշտութիւն և այլն: Քրիստոնէական դաստիարակութեան նպատակն է քրիստոնէութեան ճշմարտութիւնները զարթուցանել աշակերտի սրտի մէջ և բարոյականութեան հիմունքը հաստատել և ոչ թէ մեղսաբանութիւն անել: Աշակերտը որ մեղքերի անունն անգամ չիմանայ աւելի լաւ է, քան թէ նրանց սահմաններն իբրև դաս սովորի: Եթէ մարդ ուսանում է լինիլ բարի, առաքինի և ճշմարիտ, այս ասաւել մեծ նշանակութիւն ունի, քան թէ սովորիլ չլինիլը չար, մոլի և սուտ: Քրիստոնէի համար միայն մոլութիւնից հեռանալը բաւական չէ, նա պարտականէ և գործի առաքինութիւն: Այս լրութիւնը և կատարելութիւնը տուեց Յիսուս Նոր օրէնքին վերաբերելով հնոյն: Նա բաւական չհամարեց այն ըսկզբունքը. — մի սպանաներ, մի առեր, մի չնար, մի սուտ խօսիր և այլն այլ ասայ. սիրիր, սուրբ կաց, ճշմարիտ խօսիր և այլն: Ուրեմն ի՞նչքան մեծ սխալմունք է փոխանակ այս ուղղութիւնը պահպանելու քրիստոնէական դասագրքերի մէջ, փոխանակ գործնական սկզբունքները արմատացնելու, բացասական մեղքերն էլ բացատրել և քրիստոնէականի մասն շինել: Այն բոլորովին ուրիշ բան է, եթէ մի քարոզչէ յարձակվում է ժողովրդեան որ

և իցէ մի արմատացած մոլութեան վերայ։ Նա արդէն նը-պատակ ունի յանդիմանելու և ոչ թէ ուսուցանելու։ Բայց դասական գիրքը ուսանելու համար է և գործունէութեան։ Նա գիրք առաքինութեան պէտք է լինի և ոչ թէ միանգամայն և գիրք մոլութեան։ Ամենայն քրիստոնէական դասական գիրք պէտք է Աւետարանի ուղղութիւնն ունենայ իրան համար հիմք և Աւետարանի ուղղութիւնը այս է։— Արա, գործիր, գործիր արդարութիւն, գործիր սրբութիւն, գործիր առաքինութիւն և ճշմարտութիւն և այլն։ Եթէ դասական գիրքը այս նպատակին չէ ծառայում, եթէ դաստիարակը չէ համարում և չէ պահպանում աշակերտի սիրտը իբրև տուն աղօթից, նա շինում է նրան այր աւազակաց։ Նա կ'ասի, եթէ ականջ ունի, այն արդար յանդիմանութիւնը թէ։ «Տուն իմ տուն աղօթից կոչեսցի և դուք արարիք զդա այրս աւազակաց»։

Ասացինք որ վիճակաբան հոգին յունական է, որովհետև Հայկական եկեղեցին ի սկզբանէ հեռի է փախել վիճմունքներից, իմանալով, որ քրիստոնէութիւնը ճարտարամտութիւնից և պերճախօսութիւնից չէ կախուած, որ նրանով ջանահնար լինի մարդ համոզել։ Քրիստոնէութիւնը՝ մի երկնային սերմն է, որ ընկնում է, եթէ երկիրը բերրի է և մշակած, պտղաբերում է, իսկ եթէ ապառաժ է, մարդկային հանճարը նրան կակղելու ոյժ չունի։ Մինչև մարդս ինքը իրան ձեռքովը չի կամենում իրան սիրտը փափկացնել՝ քրիստոնէական երկնային շնորհաց ցողը անարգասիրէ մնում նորա համար։ Քրիստոնէութիւնը հենց իրան սկզբնական օրից մի ճանապարհ է ունեցել—առնել եւ ուսուցանել, իսկ վիճաբանել՝ ոչ բնաւ։ Այսպէս են արել Աւետարանի քարոզութեան Առաքեալները. եթէ ընդունել են նրանց երկնային Աւետարանը, նրանց սիրոյ խաղաղութեան ողջոյնը՝ եթէ հաւատացել են, շատ լաւ, ապա եթէ ոչ, թափեն տուել իրանց ոտների փոշին ու հեռացել։ Այս ճանապարհն է ունեցել բռնած իրան համար և մեր անարատ մայրը Հայաստանեայց Առաքելական բազմաչարչար եկեղեցին։ Այս ճշմարիտ հոգին և ուղղութիւնը մենք տեսնում ենք հենց նորա սկզբնաւորութեան առաջին դարերումը։ Մինչդեռ Նիկիական ժողովումը եր-

կար ու բարակ վիճաբանութիւններ են լինում Յիսուսի Քրիստոսի վրայօք. մինչդեռ մարդկային մտքից անհաս խորհրդներին սահմաններ են որոնվում, Հայաստանեայց եկեղեցին նիկիական հանգանակը ընդունելուց և ընդունելուց յետոյ աղաղակում է իրան առաքելական Հայրապետի բերանով. «Իսկ մեք փառաւորեսցուք զոր յառջքան զյաւիտեանս, երկրպագանելով սրբոյ Երրորդութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ:» Տեսնում է Հայաստանեայց եկեղեցին, որ տկար մարդը պէտք է միայն սիրի, փառաւորի Աստուծոյն իրան կեանքով և երկրպագութիւն տայ խոնարհութեամբ և ջերմեռանդութեամբ, և ոչ թէ առաւել քան իրան կարը նկրտելով խորասոյզ լինի անհետանայ Երրորդութեան, մարդեղութեան անհաս խորհրդների մէջ. ի զուր ժամանակ կորուսանելով վիճաբանութեանց և աղմուկների մէջ. ինչպէս անում էր Յունայ եկեղեցին:

Եթէ վերջին դարերում հակառակութեան հոգի մտաւ Հայաստանեայց եկեղեցւոյ վարդապետների մէջ, այդ ևս նորամուտ էր և ոչ բնիկ Հայկական: Հետևապէս ուրեմն պէտք է վերանայ մեր քրիստոնէական դասագրքերի միջից վիճաբանական, հարցուպատասխանական հոգին, որովհետև եթէ աշակերտը զդացել է քրիստոնէութիւն, եթէ մաքրուել է նրա բոցովը, այնուհետև նա ամենայն հարցմունքի կարող է պատասխան տալ: Նորա կեանքն արդէն և գործքը, իբրև ամենամեծ պերճախօսներ, կարող են համոզել ամենին: Հայկական եկեղեցւոյ վարդապետները քրիստոնէութիւնը սորվեցրել են, ոչ թէ նոր սահմաններ և հարցմունքներ ստեղծաբանելով, այլ նոյն իսկ քրիստոնէական ուսմանց անդոյդ մատենի— Աստուածաշնչի վրայ: Մեկնել են, բացատրել են իրանց աշակերտների կամ ուկնդիրների առաջ Աստուածաշունչ գիրքը, յորդորակներով, քարոզներով և խրատներով: Նոքա Աստուածպաշտութիւնը կամ աւետարանական ուսմունքը չեն համարել միայն մի հասակի համար նշանակուած ուսմունք, այլ մեկնութիւններով այնպիսի ճանապարհներ բաց արել, որ թէ մանուկի և թէ ծերի համար Աստուածաշունչը հասարակաց բաժին դառնայ. ամէն մինը ընտրի և ճաշակի այն երկնային խնջոյքից իրան հոգւոյն և հասակին յարմար կերակուրը և

անունդը։ Հենց այն այս իսկ եղանակն էլ պէտք է պահպանուի այժմ մեր հայկական դպրոցների և դաստիարակութեան մէջ։ Ո՞ր մատեանը կամ հեղինակութիւնը կարող է ունենալ այն բնական կապը, ինչ որ ունի Աստուածաշունչը։ Սահմանադրութիւնով սկսանվում է և Աւետարանով պսակվում։ Ցուսով և հաւատով սկսանում է և Սիրով ու Ցուսով աւարտվում։ Ամենայն քրիստոնէական դաստիարքների մէջ էլ պէտք է պահպանուի այս կարգը։ Պէտք է գրուի, ոչ թէ վայր ի վերոյ հարցմունքներով, այլ ընդարձակօրէն թէ ի՞նչպէս ամենայն ազգ և լեզու մանաւանդ Իսրայէլի ազգը, Աստուծոյ ընտիր ժողովուրդը՝ յուսով հաւատով սպասումէր Փրկչի գալստեանն։ Պէտք է գրուի թէ ի՞նչ մեծ սէր էր Աստուածորդւոյ սէրը, որ մարդկան անօրէնութեանց համար մարդացաւ, խաչեցաւ և ի մահ մատնեցաւ։ պէտք է գրուի թէ ի՞նչ ուղղութիւն տուաւ մարդկութեանը Գողգոթայի վերայ խաչեալ Փրկիչը։ ի՞նչ Աւետարան աւետարանեց քրիստոնէութիւնը մարդկութեանը, ի՞նչ պատուէրներ և պարտքեր աւանդեց կատարելու, ի՞նչ իրաւունք և կատարելութիւն շնորհեց մարդկութեանը, ի՞նչ մեծամեծ յոյսերի կարող է ակնունիլ մարդս իւր Փրկչէից։ որչա՞փ երախտագիտութիւն անհուն փառատրութիւն և ջերմեռանդութիւն է հարկաւոր այսպիսի մի Փրկչին։ Ի՞նչ պատուէրներ տուեց մարդուն առ անձն, առ ընկերն, առ ազգն, առ հայրենիս՝ առ մարդկութիւնն։ Այս սկզբունքները պէտք է լինին քրիստոնէական դաստիարակութեան հիմունքը։ այսու հոգւով պէտք է աշակերտք զարգանան, որ ուսումը և գործը ի միասին սկսուի։ Պէտք է պարզ յայտնուի աշակերտին, որ մի մեծ օրինակ կայ աշխարհի երեսին նմանելու—ԲՐԻՍՏՈՍ։ և մի առաքինութիւն կայ գործ դնելու՝ որ է ՍԷՐ։ իրանց բոլոր նշանակութեամբ։ վասն զի քրիստոնէութիւնն է կրօն սրտի և կրօն գործոյ։ քրիստոնէութիւնն է ՁԱՌ ԽԱՉԻՆ, ինչպէս գեղեցիկ ասումէ Պողոս առաքեալը։ Ի՞նչ օրից երկինքը սիրով միացել է երկրի հետ։ ի՞նչ օրից հնչուել է—փառք ի բարձունս Աստուծոյ եւ երկիր խաղաղութիւն, այն օրից մարդս պատուէր է ստացել սիրելու, հանապազօր գործելու և առ աստուածանմանութիւնն ձգտելու։ Այսպիսի մեծ պարտք կայ մեր առա-

ջին և այս պարտքն էլ պարտական ենք սովորելու, մեր ծնընդեան և մանկութեան օրից, վասն զի պատուիրած է. «Ուսիր ի մանկութեան մինչև ի ցես հասեալ յաւուրս ծերութեան, քանզի ժամանեալին ամք, յորս ասասցես ոչ են կամք իմ ի դոսա։»

Քրիստոնէութիւնն է ուրեմն մարդուս ամբողջ կեանքի ուսմունքը՝ մանկութիւնից սկսած մինչև խորին ծերութիւնը։

Ա՛յ ոչ թէ մի լոկ դպրոցական ուսմունք է, այլ ուսմունք ընտանեաց, ուսմունք հրապարակի, ուսմունք յամենայն գործառնութիւնս (վասն զի ամենայն բարի գործ քրիստոնէական ուսմունք է համարվում) ուսմունք եկեղեցւոյ, ուսմունք աշխարհականի և եկեղեցականի, ամենայն ոք պարտ է ուսանիլ և ուսուցանել։ Զարմանում ենք, որ նորերումս Հայաստանեայց եկեղեցւոյ հովիւներից ոմանք, բոլորովին ընդդէմ Քրիստոնէական զարգացման, դուրս եկան և պնդեցին գրվել թէ քրիստոնէութիւնը միայն եկեղեցականն իրաւունք ունի ուսուցանելու *։ Ո՞ր քրիստոնէական օրէնսդրութիւնից, ո՞ր Հայրապետական կանոնագրքից և կամ Հայաստանեայց եկեղեցւոյ ո՞ր կանոնից է վեր առած այսպիսի մի տարտամ առաջարկութիւն, չգիտենք։ Վասն զի չենք էլ տեսնում թէ լինի։ Մենք ևս համոզուած ենք արդարև, որ եկեղեցականը առաւել պարտական է ուսուցանել Քրիստոնէութիւն, աշթուն հովիւ հանդիսանալ իրան հօտին և Ջերմեռանդ սպասաւոր իրան եկեղեցուն։ բայց այս մի պարտք է և ոչ իրաւունք։ Եկեղեցականը իրան կոչմամբ պարտաւորվում է առաւել ուսուցանելու և ոչ թէ իշխանութիւն ստանալու, որ խափանի այլոց ուսուցանելը։ Քրիստոնէութիւնը միշտ ներողամիտ է և քարոզում է ազատութիւն խղճի։ Քրիստոնէութեան մեծ հիմնադիրը վաղուրեան արձակ իրաւունք

(*) Տես «Տեսութիւն տասնամեայ գործողութեանց եւ հաշուոց Հողաբաշխուաց Ներսիսեան Հայոց Հոգեւոր Ուսումնարանին Տփխիսայ» անուանեալ մատենի մէջ. երես 111։ Այս մատեանը պարունակում է իրան մէջ խոշոր ստութիւններ եւ զրախօսութիւններ, որոնց մասին մինչեւ ցայսօր մի զրաւոր հերքումն չէ հրատարակուած, բայց ժամանակը արդէն իրօք հերքել է, արդարութեան եւ ճշմարտութեան անունը սուրբ եւ անարատ պահպանելով զրախօսութեան բծերից։

Ծ. Հ.

ուաւ ամենին նորա պնուէնը քարոզել և երբ իրա աշակերտները եկան ասացին, թէ մէկ մարդ քո անունով դև էր հանում և մենք արգելեցինք, նա նրանց յանդիմանեց այս խօսքերով. «Որ ո՛չ է մեզ հակառակ ի մեր կողմն է»։ Մի՞թէ հայրը իրաւունք չունի իրան որդուն Քրիստոնէութիւն ուսուցանելու, որովհետև աշխարհական է, մի՞թէ մայրը իրաւունք չունի իրան աղջկանը Քրիստոնէութիւն ուսուցանելու, որովհետև կին է, և ո՞վ կարող է սահմանել մի այսպիսի ատուածընդդէմ կանոն։ Այս տեղ՝ աշխարհականը՝ քրիստոնէութիւն է ուսուցանում և ո՛չ թէ մկրտութիւն է անում կամ պատարագ մատուցանում, ինչեղեալ է թաղում կամ գերեզման է օրհնում, որ միայն Եկեղեցականի կատարելու պաշտօն է։ Հայաստանեայց եկեղեցին իբրև մի քրիստոնէական ճշմարիտ Եկեղեցի ո՛չ երբէք մի այսպիսի խարութիւն չի արել իւր աշխարհական և Եկեղեցական որդւոց մէջ քրիստոնէական ուսմանց մասին, ո՞վ որ այսպիսի խարութիւն կանի, նա չէ պատկանում նրան։ Հայկական Եկեղեցւոյ պատմական կեանքը, ցոյց է տալի մեզ, որ ինչ տեղ Եկեղեցականը՝ այն տեղ և աշխարհականը՝ բարձրացրել են իրանց ձայնը նորա պաշտպանութեանն համար և պաշտպանութիւնը առանց ճանաչողութեան և ուսման չէ եղել։ Ինչ տեղ Ղևոնդը իբրև քաջ հովիւ բարձրացրել է իրան խրախուսանաց ձայնը՝ այնտեղ և Վարդանը՝ իրան քրիստոնէական պերճախօս լեզուն. և ինչո՞ւ միայն էս, ինչ տեղ աշխարհականը տկարացել է, Եկեղեցականն է նրան օգնութիւն հասել, ինչ տեղ եկեղեցականն է տկարացել, աշխարհականն է նրան օգնութիւն հասել։ Այն ինչ Հայաստանի պատգամաւոր վարդապետները չեն կարողանում կամ չեն ուզում պաշտպանել ցունաց կայսեր և Աստուածաբան վարդապետների առաջ մեր Եկեղեցւոյ դաւանութիւնը և Սանահնեցի կամ Գարափնեցի Յակոբ վարդապետը ցունաց կողմն է շեղվում նրանց քմացը համաձայն դաւանաբանական գիր շինելով՝ մեր Գագիկ թագաւորը՝ իբրև կորովամիտ արծուի թռչուն սլանում է դէպի Կ. Պոլիս թագաւորի առաջին ծուէն ծուէն է պատառում Յակոբ վարդապետի տուած թիւր դաւանագիրը և ինքն երկարօրէն ճա-

ռախօսութեամբ Սուրբ Եկեղեցւոյ մէջ պատանձեցնում է Ցոյն Աստուածաբաններին. Հայ մոլորեալ վարդապետին յանդիմանելով, և նորա անստոյգ տեղեկութիւնները ջրելով և ցրելով *: Եւ նոր դարձում էլ քանի՞ քանի՞ աշխարհական անձինք ուսուցանում են Քրիստոնէութիւն և գրքեր ուենին շինած. ինչպէս է Փեշտրմալճեան Կարապետ վարժապետը իւր Լուսաշաւիղ անուանեալ գրքով:

Այսպէս ահա աւարտ տալով մեր բանին միանգամ ևս կրկնում ենք մեր ասածները համառօտիւ, որ մեր քրիստոնէական դասագրքերը անյարմար են քրիստոնէութիւն ուսուցանելու, և դաստիարակների դասատուութեան եղանակը անյարմար է և հայկական չէ:

Անյարմար են դասագրքերը, որովհետև չկայ նրանց մէջ այն սկզբունքը, որ աշակերտին մտածել և զգալ սովորեցնի. հայկական չէ նրանց եղանակը, որովհետև կուրգկուրայնամանութիւն են բոլորովին օտար և արդէն հերքուած ուղղութեան: Անյարմար է բոլորովին և դաստիարակների դասատուութեան եղանակը, որովհետև կուրօրէն հետևում են այն գրքերին և շատ անգամ թէ զգում էլ են նրանց պակասութիւնը չեն վատահանում հրապարակաւ նոյն զգացմունքը խոստովանել, մտացածին երկիւղներից պաշարուելով: Ո՞ւր մնաց ճշմարիտ դաստիարակութիւնն, երբոր ճշմարտութիւն ուսուցանողը ինքը վախում է ճշմարտութիւնը խոստովանել: Այսպէս է ահա թէ քրիստոնէական դասագրքերը և թէ նրանց դաս տալու եղանակը, որ ուսանող աշակերտի միայն ատամները և շրթունքները պէտք է վաստակին, իսկ սիրտը միտքը և կամքը պիտի մնան անաշխատ, անգործ, մեռած և թմրած ազնուագործութեան համար: Չկայ նրանց մէջն մարդուն Աստուծոյ

(*) Այս տեղեկութիւններն գրուած են Յ. դարու հեղինակ Մատթէոս Ուրհայեցւոյ կամ Եդեսացւոյ պատմագրութեան մէջ. Մենք ցաւում ենք որ այս պատմագրութիւնը տակաւին ձեռագիր է. Գաղղիերէն թարգմանութիւնը Եդուարդ Դիւ Լօրէի աշխատութեամբ տպած էփարիզում 1858 ին, բայց հայկական բնագիրը տակաւին վանքերի անկիւնումն է ընկած. Ցիշեալ պատմագրից Գաղղիի արած առնչութիւնը մեր դաւանութեան մասին կհրատարակենք մենք օրագրով

Ծ. Հ.

հետ միացնելու տարբ և այն Աստուածը, որ անուանել է իրան Էմմանուէլ—Աստուած մեզ հետ, մնում է աշակերտի համար Աստուած օտար։ Աշակերտը փոխանակ իրան մէջ որոնելու Նրան, իրան մէջ խնդրելու և իրան մէջ տեսնելու, որոնում է ուրիշ տեղ և ուրիշ սահմանում առանց գտնելու։ Ցաւալի աշխատանք։ Մեր կարծիքով քանի որ քրիստոնէական ուսմանց ընտիր դասական գրքեր չկան, աւելի լաւ է Ս. Գիրքը կարդացնել աշակերտին դասատան մէջ և սուրբ Հարց մեկնողական աշխատասիրութիւնները, քան թէ այն անկապակից իմաստներով և հարցուպատասխաններով գրուած տետրակները, որոնք գործ են դնվում այժմ։ Բայց տպած ունինք գոնեա մեր ձեռքով ամբողջ Ս. Գիրքը, որ գիւրին լինի ամէն դպրոցի համար բաղմաթիւ օրինակներ ձեռք բերելու և ընթերցասիրել տալու։ Ամաչելով ասում ենք, որ մեր Նախնեաց ձեռագիր Աստուածաշունչները աւելի շատ են, քան թէ, մեր ձեռքին գտնուած տպածները, այն էլ մուրացածին օտարի ձեռքով տպածներ։ Զարմանալի սառնահոգութիւն։

Բայց ժամանակ է այս սառնահոգութեան առաջն առնելու, ապա թէ ոչ շատ թանկ կնստի սա մեր ապագայ սերընդոցը։ Անհրաժեշտ պարտք է մեր ամենիս համար, թէ եկեղեցականի և թէ աշխարհականի, այն ջերմ մտադրութիւնը դարձնել քրիստոնէական դաստիարակութեան վրայ, որոնք դարձնում էին մեր երանելի Նախնիքը։ Առանց կրօնական և բարոյական դաստիարակութեան, առանց լուսոյ Աւետարանի, անմխիթար է և աղօտ ամենայն լուսաւորութիւն։ Միայն քրիստոնէութիւնն է հաստատուն հիմք մեր երկնաւոր և երկրաւոր երջանկութեան և լուսաւորութեան։ Եթէ կըլինինք ճշմարիտ քրիստոնեայ, կլինինք և բարի քաղաքացի, ընկերութեան և աղգութեան հաւատարիմ սպասաւոր և մարդկութեան լուսաւոր անդամ։

Գ. Մուրատեանց.

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ԵՐԱԶԱՑՈՅՍ ՄԷԿ ԿԱՐԾԵԱՑԸ

ԳՆՆՈՒԹԻՒՆ

(Մասեաց Աղաւնիից քաղած).

Շարունակութիւն *

Բայց ինչ հեռու երթամք. ահա նոյն իսկ Վենետիկեցի Մխիթարեանք, նոյն իսկ իրենց վանքին մէջ, իրարու հետ անդամ խօսած ատեններին, սովորութիւն ըրած են իրենց համար ու իրենց կաթոլիկ ժողովրդոյը համար ըսել «ուղղափառ», մեր «ուղղափառները» (որ իբր թէ «կաթոլիկ» բառին նշանակութիւնն ունի). իսկ մեզի և մերոնց համար կըսեն «Հայերը, Հայոց» վարդապետները, «Հայոց» պատրիարքը, «Հայոց» եկեղեցիները. և թէ այս ինչ մարդը ուղղափառութիւնը ուրացաւ «Հայ եղաւ», հայութենէն դարձաւ ուղղափառ, եղաւ, և այլն: Քանի՞ մը տարի՞ հագիւ կար որ սկսեր էին իբր թէ կակղցընել իրենց այս կերպ այլանդակ բացատրութիւններն ու ըսել մեզի համար «մէկալ Հայերը», և իրենց համար «ուղղափառ Հայեր», բայց եօթը ութը տարի՞ մը կայ որ—գուցէ Հռովմայ փրոփականտայէն ստիպած—դարձեալ սկսեր են իրենց առաջին սովորութիւնը ձեռք առնուլ, և իրենց կրօնակից Վենետիկի Մխիթարեանց հետևիլ. որք առանց «հերձուածող» կամ «չարափառ» ածականներուն Հայոց անունը բերան չեն առնուր, առանց «մեր ուղղափառները» ըսելու կաթոլիկներուն անունը չեն տար:

Աշ. Արդեօք կաթոլիկութիւնը այդպէս խափանի՞չ է նաև Եւրոպացի ժողովրդոց ազգային ոգւոյն:

Վ. Այո՛, բայց ոչ ամենեցուն և ոչ ամէն տեղ: Եւ ասոր պատճառը յայտնի է: Նախ՝ Եւրոպացիք վարժած են լաւ գա-

* Տես կանկան Դ. տարւոյն Թ. թիւը

նալանելու «կրօնն ու ազգութիւնը» ուսան երբ հարցընես,—օրինակի համար—Գաղղիացիի մը թէ ինչ ազգէ ես, չըսեր թէ «կաթոլիկ» եմ, չըսեր թէ «կալվինական» եմ, այլ «Գաղղիացի» եմ կըսէ: Հարցուր Գերմանացիին, չըսեր թէ լուտերական եմ կամ թէ կաթոլիկ եմ, այլ թէ «Գերմանացի եմ»: Անգղիացւոյն հարցուր, Անգղիացի եմ կըսէ, եւ մինչեւ որ չհամարձակիս հարցանելու թէ ինչ հաւատքէ է չըսեր թէ «անկլիքան եմ» կամ «մեթոտիսթ եմ կամ «քուէքր» կամ «կաթոլիկ» եմ եւ այլն

Իսկ արեւելեան ժողովրդոց մէջ քանի հարիւր տարի է, եւ աւելի մահմէտական տէրութեանց զօրանալէն վերջը, սովրութիւն եղած է ազգութիւնն ու կրօնը կամ դաւանանքը իրարու հետ խառնել մանաւանդ թէ մէկուն ինչ ազգէ լինելը միայն դաւանանքէն հասկընալ: Ինչպէս ահա կրօնական մէկ անունով «մուսլիման» կըսուին Արաբացին, Պարսիկը, Թուրքը, Օսմանցին, Քիւրտը, Թիւրքմէնը, Թաթարը, եւայլն. «կաթոլիկ» կըսուին յարեւելս հայեր, ասորիներ, հոռոմներ, մարոնիներ, քիլտանիներ, եւ այլն. «հոռոմ» կըսուին յոյներ, ասորիներ, հայհոռոմներ, եւայլն. եւ օսմանեան տէրութիւնը «միլեթ այսինքն «ազգ» անունը կուտայ այն ամենայն ժողովրդեան որ այս կամ այն հաւատքին տէր է. ուրիշ ազգութիւն չճանչնար:

Երկրորդ, Եւրոպացի ազգերուն մեծ մասը մէկ մէկ զօրաւոր տէրութիւններ լինելով դուցէ կրնան միարան լինել ի հաւատոյս Հռովմայ եկեղեցւոյն հետ, եւ միանգամայն «պահել» իրենց ազգային ոգին, ազգային ծէսն ու օրէնքները, ոչինչ համարելով պապին «երկիշխան» պետութիւնը: Բայց հաւանք ե՞րբ կրցեր են այդ քաջութիւնն ունենալ որ այսու հետեւ կարենան եւ միթէ հարիւր վաթսուն տարուան փորձը չսովրեցո՞ց Մխիթարեանց թէ այս իրենց կարծիքը երազ է եւ երազայոյս ցնորք.

Աշ. Բայց, հայր սուրբ, մէկն ըսաւ ինծի թէ Բաղմավիպին այն խօսքը՝ կարելի է ուղիղ հասկանալ այս մտքով որ Հայոց «իրենց ձեռքն է» հռովմէական լինելով եւ անկորուստ եւ անխառն պահել ոչ միայն իրենց ազգային լեզուն, այլ եւ իրենց եկեղեցական ծէսերն ու արարողութիւնները:

Վ. Ս.յան՝ ատոր նման խօսք մը կարող ենք և մենք ըսել՝ առանց վախնալու որ «երաշտաս» ըսուելու արժանի դատուիմք բայց ի՞նչպէս.—երբոր այսպէս ըսեմք. «Պէտք էր որ Հայոց «իրէնց ձեռքը լինէր» անխառն և անկորուստ պահել իրենց ազգային ծէսերը՝ ազգային օրէնքները՝ լեզուն՝ հոգին՝ նաև ընդհանրական եկեղեցւոյ հետ սերտ միաբան լինելով հաւատոյս՝ բայց ատոր համար պէտք էր որ ընդհանրական եկեղեցին ևս ազատ լինէր պապական «երկիշխան» տիրապետութենէն և ամէն տեսակ բռնադատութենէն ի հաւատոյս»: Իսկ Հ. Ղեւոնդին միտքը մի՛թէ այս է. ոչ բնաւ, ինչպէս որ յայտնի է նրա նախընթաց ևհետևորդ խօսքերէն՝ հապա այս թէ՝ «Հայք կոյր ըզ կուրայն հպատակելով ևս պապին իրենց«կաթուղիկոսովն ու Պատրիարքներովը՝ կամ՝» թէ ասոնցմէ բոլորովին զլուխ քաշած՝ Հռովմայ պապին ու փրոփականտային ամէն մէկ վճիռներուն ու հրամաններուն հնազանդելով «կրնան» իրենց ազգային ծէսերն «ու սովորութիւնները պահել՝ որով և իրենց ազգութեանը մէջ մնալ»:

Եթէ այդպէս է,—որպէս և է իսկ՝—իրաւունք չունի՞մք արդեօք հարցընելու Հ. Ղեւոնդին թէ—ուրիշ տեղերու կաթոլիկ Հայերը թողումք՝—ինչո՞ւ նոյն իսկ Մխիթարեանք՝որ այս տարիներս բազմաստորագիր յայտարարութիւններով ևուրիշ շատ կերպերով յայտնի ըրին թէ «սերտ» միաբան են Հռոմայ փրոփականտային հետ՝ ինչո՞ւ ըսեմ՝ իրենք իրենց «ազգային ծէսերուն մեծ մասը չեն պահեր:

Ս.Հ. Ինչ կըսէք՝ Հայր սուրբ՝ միթէ Մխիթարեանք Հայաստանեայց եկեղեցւոյ ամէն ծէսերն ալ անկորուստ և անխառն չե՞ն պահեր»:

Վ. Ս.մէնը. ոչ. մեր ծէսերուն մէկ մասը միայն կպահեն. այն ևս գրեթէ այն կերպով ինչ կերպով որ մեր ժամանակը շատ Հայեր իրենց պահքը կըպահեն . . .

Ա.Հ. Ուրեմն ֆռանկական ծէսե՞ր կխառնեն եկեղեցական արարողութեանց մէջ:

Վ. Ս.յան՝ և խիստ շատ՝ թէպէտ և ոչ այնչափ որքան որ խառնած ու խառնակած են Իզմիրու Զահկեցիները՝ Պոլսոյ Հռովմէականները՝ Լեհաստանի և Խրիմու կաթոլիկները. Ա.ժ-

տէրխանի եւ Թիֆլիզու փառանկները, Լիբանանու կրօնաւորները եւ Վենայի Մխիթարեանները։

Ա.Հ. Ասացէք խնդրեմ, Հայր սուրբ, թէ գլխաւորապէս մեր որ ծէսերը փոփոխեր են Մխիթարեանք։

Վ. Ո՞ր մէկն ըսեմ, եղբայր։—առ այժմ մէկ քանին միայն յիշատակեմ՝ որքան որ այս վայրկենիս միտքս կուգան աչքով տեսածներէս։ Բայց այժմէն գիտցիր որ միտքս այն փոփոխութիւններուն պատճառներն ու հետեւանքները քննել չէ. այն ուրիշ ատենի խնդիր է. այլ միայն ցուցընել կուզեմ թէ Մխիթարեանք չեն կրնար ըսել ճշմարտութեամբ՝ ինչպէս որ ԿՊԱՐԾԻՆ ՍՏՈՒԹԵԱՄԲ թէ իրանք «ազգային ծէսերը կպահեն։

Սուրբ պատարագի արարողութիւններէն սկսիմք, որ եկեղեցական ծէսերուն գլխաւորները կհամարուին ամենայն ազգաց մէջ։

Թիւ պատարագ կմատուցանեն, որ հանդիսաւոր պատարագին համառօտածն է։

Մինեւնոյն ժամանակին մէկ եկեղեցւոյ այլեւայլ խորաններուն վրայ զատ զատ քահանայք մէկ մէկ սպասաւորներով պատարագ կմատուցանեն։

Մինեւնոյն սեղանին վրայ մէկ օրուան մէջ հինգ վեց պատարագ կընեն հետզհետէ։

Աղուհացից ամէն օրերն ևս պատարագ կմատուցանեն։

Ամէն քահանայից վրայ պարտք դրած են որ ամէն օր պատարագ մատուցանեն։

Պատարագի նշխարը լատինացւոց նշխարին ձեւովն ու բարակութեամբը և խմորովը կընեն։

Մասը, այսինքն ժողովրդեան բաժնուելու նշխարն ևս լատինացւոց նշխարին նման բան մը կընեն։

Նշխարը թարմ չեն հաներ ի սեղան, այլ ամսով պահածը ալ կգործածեն պատարագի։

Ժողովրդեան տրուելու ճաշակը քահանային նշխարէն չեն ըներ, այլ ըստ լատինացւոց մանր մասնիկներ կսրբագործեն և զանոնք կուտան ամէն հաղորդուողին զատ զատ առանց սուրբ արեան մէջ թաթախելու։

Բաժակին մէջ ջուր կխառնեն։

Հաւատամքին մէջ սուրբ Լուսաւորչին գրած բացատրութիւնը, «Այսինքն յԿուսանէ Հօր» դուրս կձգեն, և տեղը կաւելցնեն այս խօսքը, «Նախ քան զամենայն յաւիտեանս»։

Հաւատամքին մէջ «Նոյն ինքն ի բնութենէ Հօր» ըսելու տեղը կըսեն, «Նոյն ինքն համագոյակից Հօր»։

Հաւատամքին մէջ Հոգւոյն սրբոյ համար կաւելցնեն այս խօսքը, «Որ ի Հօրէ և յՈրդւոյ բղխի»։

Պատարագի տաեն «Հոգեթափ» չհագնելով, այլ կօշիկ կամ մուճակ, վերաբերութենէն առաջ չեն հաներ ոտքերէն։

Վերաբերութեան տէն զգիրները չեն չոքիր։

Ողջունի երգին մէջ «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, «Որ էնն Աստուած աստ բազմեցաւ» ըսելու տեղը՝ կըսեն, «Քրիստոս ի մէջ մեր յայտնեսցի՝ Որ էնն Աստուած աստ բազմեսցի։

Նոյն երգին մէջէն այս երկու տողը դուրս կձգեն, «Եկեղեցիս մի անձն եղև, Համբոյրս յօդ լըման տուաւ»։

«Աւրէք կերէքէն» անմիջապէս տաւաջ եղած քահանայական աղօթքին այս խօսքը «Առեալ զՀացն» և այլն, կըփոխեն, «Եւ յարարչագործ ձեռս իւր» ըսելու տեղը՝ կըսեն, և ի պատուական ձեռս իւր»։

«Որդի Աստուծոյ» երգին ժամանակը, քահանային ըսելու աղօթքին այն նշանաւոր և խորհրդաւոր խօսքը, «Որով զՀացս օրհնեալ՝ մարմին ճշմարտապէս արասցես», կփոխեն ու տեղը կըսեն «արարեր։»

Քահանային յիշատակութեանց աղօթքին մէջէն դուրս կձգեն այս խօսքերս «զնախահարս, զՀայրապետս, զմարգարէս, զառաքեալս, զվկայեալս»։

Պատարագին մէջ սրբազան Կաթուղիկոսին անունը յիշատակելու տեղը՝ կըսեն, «Եւ առաւել զսրբազան պապն մեր զտէր Պիոս շնորհեսցես մեզ ընդ երկայն աւուրս ուղղիղ վարդապետութեամբ»։ — Նոյնպէս պապին անունը կյիշեն «Ասասցուքին» մէջ։ և անդաստան օրհնելու տաեն կըսեն «Արեւմտեան կողմն աշխարհիս, վեհապետութիւն սրբազանի պապին Պիոսի, և թագաւորութիւն քրիստոնէից»։

Սրբազործեալ նշխարը չեն թաթախեր սուրբ արեան մէջ. և յետոյ չորս մաս չեն բաժներ։

Պատարագի ատեն ժամանակ ժամանակ ձեռքի զանգակ կը-զարնեն ըստ լատինացւոց։

Շատ մը ուրիշ Ֆռանկական մանր արարողութիւններ, և-զանակներ և շարժմունքներ կխառնեն պատարագի հանդիսին մէջ, որ այս տեղ յիշատակելը երկար կլինէր։

Գրիգորեան տոմարն ընդունած լինելով, և ոչ իսկ իրենց տպագրած օրացուցին ու տօնացուցին կարգերուն կհետևէին, այլ բոլորովին լատինացւոց։

Գրեթէ բոլոր տէրունական տօնները լատինացւոց հետ կը-տօնեն։

Գլխաւորապէս Ծնունդը կտօնեն դեկտեմբերի 25-ին, և միայն Յայտնութիւնը յունվարի 6-ին. որով և այն միջոցի պահքը լուծելէն զատ՝ ժամերգութեան ու տօնացուցի կար-գը տակնուվրայ կընեն։ Տեառնընդառաջը կտօնեն փետրուա-րի 2-ին, և Աւետումը մարտի 25-ին։

Անուան Յիսուսի տօն կկատարեն կաղանդին օրը։

Աստուածածնայ անուան տօն կկատարեն։

Սրտին Յիսուսի տօն կկատարեն։

Վարդարանի տօն կկատարեն։

Մարմնոյ և արեան տօն կկատարեն ընդ լատինացւոց։

Մայիս ամսոյ Ջերմեռանդութիւն կընեն ըստ լատինացւոց։

«Վարդարան» անուանեալ աղօթքը կընեն՝ լատինէ թարգ-մանած. նմանապէս «Պսակ կուսի և պսակ Քրիստոսի» ըս-ուած Ջերմեռանդութիւնները կընեն՝ համարիչ (թէղբէհ) դարձնելով. և համարիչը մետաղներով խաչերով զարդարած զօտիներէն կախած կքաշեն ըստ լատին կրօնաւորաց։

Գլուխնին վեղար չեն դներ, այլ կնգուղը փիլոնին վրայ կից կարուած լինելով՝ ուսերուն վրայ կախ կձգեն ըստ լա-տինացւոց։ Բաց յայտնմանէ, «վեղար դրաւ» բայը կգործա-ծեն՝ երբ ուզեն ըսել վարդապետի մը համար թէ «կանթոլի-կութիւնը ձգեց ու հայ (կամ՝ Իրենց մեջովը՝ հերետիկոս) եղաւ»։

Իրարու և ուրիշ եկեղեցականաց՝ երբև պատուոյ աստիճան՝

այս լատինէ թարգմանուած բառերը կգործածեն, «Հայր Պատուելի, Վերապատուելի, Գերյարգելի, Գերապայծառ :

Եկեղեցին մտած ու եկեղեցիէն ելած ատեննին՝ ճակատին օրհնեալ Ջուր քսելով՝ երեսին կխաչակնքեն :

Ծնրադրութեամբ երկրպագութիւն ընելու կամ թէ կէս մէջքէն խոնարհելու տեղը՝ մէկ ծնկան վրայ կչոքին և կելնեն :

Սովորաբար «աղօթարան» ըսուած աթոռներու վրայ չոքած կամ նստած կընեն իրենց աղօթքը՝ ֆռանկաց պէս :

Գոհաբանական հանդէսներու մէջ լատինէ թարգմանուած «Զքեզ Աստուած գովաբանեմք» երգը կերգեն ֆռանկական եղանակով :—Քանի մը եկեղեցական հանդէսներու մէջ ալ «Եկ սուրբ Հոգի» երգը կերգեն՝ որ նոյնպէս լատինէ թարգմանուած է :

Լատինացւոց «Ողջոյն քեզ Մարիամ, Լիթանիա և Ողջ ըլլար թագուհի» աղօթքները ստէպ կընեն առանձին և միաբան :

Ուրբաթ օրերը «Ճանապարհ խաչին» (խաչ եօլու) ըսուած ջերմեռանդութիւնը կընեն իրենց մատրանը մէջ :

Լատինացւոց «Հրեշտակ տեառն» աղօթքին ատենը զանգակ զարնելով՝ օրը երեք անգամ այն աղօթքը կըսեն առանձին և միաբան՝ ուր և գտնուին:—Նմանապէս արևը մըտնելէն մէկ ժամ եաքը զանգակ զարնելով «Ի խորոց կարդացի» սաղմոսը կըսեն «քաւարանի» հոգւոց համար :

Ընջեցելոց համար առանձին պատարագ մատուցանելու ատեն՝ եկեղեցւոյ մէջ տեղը «քաւարան (քաթաֆալքօ)» ըսուած բարձրաւանդակը կշինեն մեծ և փոքր :

Սուրբ հաղորդութիւնը «ճաճանչով» կդնեն ի բազմոցի՝ մասնաւոր հանդիսիւ և աղօթիւք, պատարագի խորհրդէն դուրս իրիկուն և առաւօտ, և անով օրհնութիւն կուտան ժողովրդոց, կամ առաջևը հսկումն կընեն, որ է իտալացւոց «քուառանդ՝ օռէ» ըսած ջերմեռանդութիւնը, Պօլսեցւոց հնչմամբը «քառանթուրա»;

Քրիստոսի Տեառն մերոյ թաղման թափորովը խաչի տեղ սուրբ հաղորդութիւնը կը քայլընեն ըստ լատինացւոց:

Պատկերներն առանց օծելու կդնեն եկեղեցւոյ մէջ, եւ այն

պէս անոնց առջևը մոմ կվառեն ու կաղօթեն:

Մատաղ ամենուին չեն ըներ, լատին վարդապետաց խսքէն մոլորած որ իբր թէ այն հրէական զոհագործութիւն է:

Աղուհացից առաջին չորեքշաբթին իրարու և ժողովրդեան գլուխը մոխիր կցանեն եկեղեցւոյ մէջ՝ ըստ լատին արարողութեան:

Աւագ հինգշաբթի և աւագ ուրբաթ օրերուն ժամերգութեան ատենը՝ զանգակի տեղ փայտէ կոչնակ կզարնեն ըստ լատինացւոց:

Զատկի և Ծննդեան ճրագալոյցներուն խթում չեն ըներ:

Սովորական պահքը չորեքշաբթի և ուրբաթ օրերը պահելու տեղը՝ ուրբաթ և շաբաթ օրերը կպահեն:

Ընդհանրապէս ամէն պահք լատինացւոց պէս և լատինացւոց հետ կպահեն, այսինքն աղուհացից մէջ մսեղէն կուտեն՝ ըստ իտալացւոց՝ պապին տնօրինմամբը՝ չորից եղանակաց «վիճիլիաներ» կպահեն. որ և իցէ պահքի օր ձուկ և հաւկիթ կուտեն անխտիր:

Յինանց ուրբաթ և շաբաթ օրերը պահք կպահեն ըստ լատինացւոց:

Աղուհացից մէջ լատինացւոց հետ քանի մը սրբոց տօներ կկատարեն՝ աւուր պատշաճի ժամերգութիւնը փոխելով. այսինքն մարտի 21-ին կտօնեն Բենեդիկտոսի արբայի տօնը, մարտի 7-ին Թովմայի Ագուինացւոյ տօնը, մարտի 19-ին Յովսեփայ Աստուածահօր տօնը:

Անտոնի անապատականին տօնը լատինացւոց հետ կկատարեն յունվարի 17-ին անխախտ:

Մարկոսի աւետարանչին տօնը կկատարեն ապրիլի 25-ին անխախտ:

Գիւտի սուրբ Խաչին տօնը լատինացւոց հետ կտօնեն մայիսի 3-ին անխախտ Հայոց շինած ու այժմ իրենց ձեռքը մնացած եկեղեցւոյն մէջ որ ի Վենետիկ:

Ամենայն սրբոց տօնը լատինացւոց հետ կտօնեն Նոյեմբերի 1-ին. Նոյնպէս և համօրէն ննջեցելոց յիշատակը նոյն ամսոյն երկրորդ օրը:

Յովհաննու իմաստասէր հայրապետին Օձնեցւոյ տօնը չեն

կատարեր, նոյնպէս և ոչ Պարսամ Ճգնաւորինը, ոչ Գոհարինէ կուսին և Ցամինդոսի և Ռատիկոսի տոները։

Ժամագրքին ու շարականին շատ խօսքերը կփոխուին ըստ հաճոյս անձանց, մանաւանդ թէ ըստ տգիտական և անիրաւ պահանջմանց պապի և փրոփականտային։ Այս փոփոխութեանց ամէնն ալ յիշատակելը աւելորդ կհամարիմ. մեկ քանին միայն ըսեմ։

Շնորհալւոյն «առաւօտ լուսոյ» երգին մէջ կաւելցընեն բոլորովին յանդէպս «և յորդւոյ» բառը, ըսելով «Բղխումն ի հօրէ և յՈրդւոյ, Բղխեա ի հոգւոյս» և այլն։

«Եւ յՈրդւոյ բառերը կաւելցընեն նաև այն ամենայն տեղերը ուր որ Հոգւոյն սրբոյ ելումը կամ բղխումը կյիշուի։

«Սուրբ Աստուած» երգը ի դէմս Երրորդութեան կերգեն ըստ Յունաց և ըստ Լատինացւոց, և ոչ ի դէմս Քրիստոսի ուստի և դուրս կձգեն այս խօսքերը, «Որ խաչեցար վասն մեր որ յարեար ի մեռելոց, որ ծնար և յայտնեցար վասն մեր» և այլն։ Եւ անոր ետևէն ըսելու մաղթանքը հարկաւ կփոխեն ու կըսեն, «փրկեա զմեզ ի փորձութենէ» և այլն։

«Եւ և՛ս միաբան վասն ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ զտէր աղաչեսցուք» ըսելու տեղը՝ կըսեն, «Եւ և՛ս և վասն միաբանութեան ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ»։

Շնորհալւոյն շարադրած արարչականին մէջ «Զանանց հանդիստն պատրաստեաց» խօսքը կփոխեն, և կըսեն զանանց հանդիստն պարգևեաց»։—Նոյնպէս և հաւատով խոստովանիմին մէջ «Յուսով բարեաց» ըսելու տեղը «լուսով բարեաց» կըսեն։

Շարականին, Մաշտոցին, Տօնացուցին մէջ որքան որ ուրիշ փոփոխութիւններ կընեն՝ յիշելը շատ երկար է։ Թերևս աւելի հարկաւոր գիտելիք մըն է այս որ Լատինացւոց մէջ առնուած քանի մը տօներու օրեր՝ Մխիթարայ աբբայի շարադրած խեղճուկ անալի շարականները կերգեն։ Աստուածածնայ քանի մը տօներուն ալ «Առաւօտ լուսոյ» երգին տեղը՝ նոյն Մխիթար վարդապետին շինած «Աղաչեմք զքեզ Աստուածածին» տաղը կերգեն։

Այնքան ծէսերու և ազգային արարողութեանց փոփոխութիւնները այսպէս համառօտիւ յիշատակելէն եաւ՝ դարձեալ

Մխիթարեանք չեն կրցած պահել։

Ա.։ Եւ միթէ տակաւին ևս յոյս ունին Մխիթարեանք, Հայր սուրբ, որ զՀայերը կաթոլիկ ընեն։

Վ.։ Պէտք չէր որ ունենային այսուհետև այդ յոյսը. և թերևս իրաւք ալ չունին. բայց իրենց բանին այնպէս ձեռք կուտայ որ պապին ու պապականաց առջևը փրոփականտային ջերմեռանդ պաշտօնեայք երևան, և այն կողմանէ վար չմնան վիճնացիներէն ու փրոփականտայի աշակերտներէն, այլ պնդեն և հաստատեն թէ իրենց միաբանութեան բուն վախճանն ու «նպատակը Հայերը կաթոլիկ դարձնել է, և իրենք այս նպատակին հասնելու համար ամէն ջանք ի գործ կ'դնեն»։ Զե՞ս տեսներ ի՞նչ կըսէ Հ. Ղևոնդը նոյն յօդուածին մէջ. «ճըշմարտութիւն կրօնական (որ է նախընթաց խօսքերուն նայելով «կաթոլիկութիւն, պապականութիւն»), կրթութիւն բանական կամ ուսմունք, և ոգի ազգային, այս ընկերութեան Մխիթարեանց) «նպատակն կուճանաչուին, պատուին, պտղաբերին»; Բայց այն բաւական չէ։ Հ. Ղևոնդին նախանձայուզութիւնը այնչափ սաստիկ է որ կերպով մը նաև կբարկանայ ու կնեղանայ մեր ազգին իւր դաւանութեանը վրայ մինչև ցայժըմ հաստատ կենալու, և «յամառութիւն» (ինատ) կանուանէ զայն յանդգնաբար. «կրօնական միութիւնն և պնդութիւն դեռ կպահէ, կըսէ., գիտենք (զՀայս) «կարծր նիզակի մը պէս». որ եթէ քիչ մ'ալ ճօճուն ըլլար, աւելի լաւ և փառաւոր կպահէր ցայսօր և ասկէ ետև այլ։ Գրեթէ նոյն ոգւով, նոյն քաջութեամբ, նոյն խորագիտութեամբ և «նոյն յամառութեամբ» կանցնէ Հայաստան արաբական բռնութեան երկդարեան յեղանակն այլ»։

Ա.։ Ներեցէք, Հայր սուրբ, մեկ չհասկըցած խօսքս ալ այդ է. արդեօք ի՞նչ կհասկընայ «կրօնական միութիւնը ճօճուն ըլլար» ըսելով։

Վ.։ Շիտակն ըսեմ, ես ալ լաւ չհասկըցայ այդ խօսքը. արդեօք այս ըսել կուզէ որ իբր թէ Հայոց հաւատքը պէտք է լինէր «եղէգն շարժուն ի հողմոյ»... Բայց ոչ. կերևի թէ «ճըկուն ըլլար պիտի ըսէ, այսինքն Յունաց և Լատինացւոց բռնութեանը և անիրաւ պահանջմանցը առջև ճկուէր, ծը-

ՆԿԱՐԱԳԻՐ ՊՈՌՈՏԱԽՕՍ ՄԱՐԴՈՒ։

Ժողովուրդը, շատ անգամ, որ և իցէ մարդու բնաւորական արատաւորութիւնը կամ արժանաւորութիւնը տեսնելով տալիս է նրան մակդիր և շատ անգամ այնպէս մակդիր (մականուն) որ բոլորովին նոր է ստեղծում, երբեմն շարժմունքից վեր առնելով, երբեմն խօսելուց, երբեմն վարմունքից, մի խօսքով նրա որոշիչ բնաւորութիւնից։ Այս տեսակ բառերը շատ անգամ ժամանակը մոցնում է գրաւոր մատենագրութեան մէջն էլ, բայց երբեմն էլ մնում է միայն ժողովրդեան բանաւոր խօսակցութեան մէջ. օրինակի համար «Ծովի աքլաբ, Պռատիկ, Սաւսարակ,» և այլն, հազար անգամ որ Հայկազեան բառարանի ահագին հատորները տակնուվրայ անես, չէս կարող այն տեղ այս բառերը գտնել և նշանակութիւնն անգամ դժուար է հասկանալ։ Ժողովուրդը ինքը գիտէ արդէն թէ այս բառերով ինչ է ուզում հասկանալ։ Բայց ասացի որ շատ անգամ էլ ժողովրդի այս տեսակ ստեղծած բառերը մընում են և գրոց մէջ ստանալով գրաւոր նշանակութիւն և գործ դնուելով իսկապէս այն մտքով ինչ մտքով որ իսկզբան հնարուել են։ Այս տեսակ բառերի կարգումը համարում ենք մենք ՊՈՌՈՏԱԽՕՍ բառը, որ անպատճառ ժողովրդեան բանաւոր խօսակցութիւնից անցել է գրոց մէջ և մնացել, և սրա նշմարանքը տեսնում ենք Ցաճկաստանի Հայերի բարբառի մէջ «Պռռալ, Պռռացող» բառերում։

Մեր միտքը այս տեղ բառաշնութիւն անել չէ, ըստ որում քննութեան տակ ընկնելու համար շատ բառեր կան և աւելի հմուտ լեզուաբանների են կարօտ, բայց այսքանս ուզում ենք ասել, որ իւրաքանչիւր բնաւորութիւն ցոյց տուող բառ պարունակում է իրան մէջ և իրան նշանակած բնաւորութեան նկարագիրը՝ որ որչափ բացատրվում է այնքան առաւել հասկանալի է լինում։ Օրինակի համար այլ է միայն ասել Աղաքինի, մոլի, անձնանուէր, ինքնասէր, և այլ է այս բառերի նշանակած բնաւորութիւնը նկարագրել։ Այսպէս էլ, այլ է միայն ասել ՊՈՌՈՏԱԽՕՍ և այլ է պատկերացնել պռռո-

տուն դարերով գործ դրուած լեզուն, երբեմն ասելով բարբարական լեզու է ժողովրդեան լեզուն, երբեմն, թէ՝ իպէ-աներ չէ կարող յայտնել, երբեմն թէ՝ չէ կարող այս լուսաւորեալ ժամանակումս գործակատար լինել։ Ինքն իրան դատումն ամէն բան, հերքումն, հաստատումն, մի զլխաւոր նպատակ ունի ուրիշներից որոշուելու՝ այս պատճառաւ երբեմն սուտ վշտանումն ժողովրդեան իբր անկանոն բարբառի վերայ, և երբեմն ցաւումն, ախ է քաշում որ իրան չեն հեռանում։ Ինչ կասէն այսպիսի մարդուն։—ՊՈՒՌՈՏԱԽՕՍ։

Տեսել է՞ք արդեօք այնպիսի մի անձն, որ ինքն իրան գովաբանումն և իրան արածներն պատմելով ականջ քաւացնում։ Տեսել է՞ք թէ ի՞նչպէս երկինք ու երկիր մռացած և միայն իրան անձնումն զբաղուած, քուչում ասես, տան մէջ ասես, հրապարակում ասես, գրով ասես թէ խօսքով ասես, անդադար կրկնում է։—այսպէս մտածեցի, այսպէս կարգադրեցի։ այսպէս գրեցի, այսպէս ատենաբանեցի, այսպէս քարոզեցի։ Ինչպէս կարծես թէ աշխարհքումս էլ շինելու բան չէ թողել, ոչ երկրիս վրայ գիւտ է թողել որոնելու և ոչ երկնքումը մոլորակ առանց գտնելու, ոչ գրականութեան մէջ գիրք առանց կարդալու և ոչ քաղաքական կամ եկեղեցական օրէնք և-կանոն առանց գտնելու։ Իրան հակառակորդներին բոլորին պապանձեցրել կալուկապ է արել, մէկին բրդան շանթել է, միւսին բրդան վեր է տուել, մէկէլին բրդան հաւատքի է բերել, մէկէլին կրիտիքել, ամօթահար է արել և այլն։ Ի՞նչ կասեն այսպիսի մարդուն։—ՊՈՒՌՈՏԱԽՕՍ։

Պատահե՞լ է արդեօք (Աստուած ոչ պատահայնի, եթէ չէք պատահել) այնպիսի անձին, որ տարիներով փթել ժանտահոտել է կոկորդաբանութեան մէջ, անարդել, արհամարհել է մարդկութիւնը, և մարդոյ իրաւունքը, ոչ բերանումը սուրբ խօսք է մնացել, ոչ երեսի վրայ ամօթ և պատկառանք, ոչ մեծ է հարցնում ոչ փոքր, ոչ տաճար սրբութեան և ոչ խնջոյք ուրախութեան, ոչ աթոռ ուսուցչութեան և ոչ ժողով ընկերութեան։ Ամենայն տեղ նրա բերանը անփակ, ամէն տեղ շրթունքները կամ շատախօսութիւնից ցամաքած և կամ կատաղութիւնից թքոտուած, ձայնը վայրենի, խօսքերը մեծամեծ, ասածները դատարկ։—Ի՞նչ կասեն այսպիսի մարդ

պոռոտախօսութիւնը իմացաք, թէ ովքեր են պոռոտախօս, էդ էլ նրանք կիմանան, ովքեր իրանց վերայ վեր կառնեն պոռոտախօսի նկարագիրը և կշարանան, բայց մեզ մնում է էլի մի քանի խօսք ասել, աւելի լաւ, որ մարդ բան շինի: Պոռոտախօսութիւնից դուրս է գալիք աժանմունք և ատելութիւն: Պոռոտախօսները փորում են մարդու սիրտը, ամենագեղեցիկ և առաքինի սիրան անգամ, մինչև որ մի արատաւորութիւն գտնեն և անիծանելու ու արհամարհելու իրաւունք ունենան, յուսահատուին մարդկերանցից և իրանց գլուխը միայն ցոյց տան: Բայց այսպէսով բան չի յառաջ գալ, խեղճ պոռոտախօսներ, աչ մեղք ու կրակ գլուխներ: Մինչդեռ դուք կպոռոտաք, մինչդեռ դուք մեծ մեծ կբրդէք, մինչդեռ դուք նոր մոլորակների կման գաք ժողովրդեանը լուսաւորելու համար, ուրիշները բանականութեան կանդեղը կվառեն ու լոյս կտան և դուք անպարծանք կմնաք: Ձեզ մի՛ բաժանէք ժողովրդից, որ կարողանաք բան շինել, աչ խեղճ պոռոտախօսներ, օգուտը մի՛ մտնի գաք ձեր կարծիքներով, որ քամին չտանի ձեզ, փոքր ինչ ոտք կոխեցէք երկրի վրայ, որ հաստատուն լինի ձեր ընթացքը: Մի՛ արհամարհէք մարդկութիւնը և ժողովուրդը, այլ ծանօթացէք նրա կեանքին, մտէք նրա սրտի մէջ և որոնեցէք այն տեղ գոնեա մի արժանաւորութիւն, մի առաքինութիւն, որ կարողանաք նրան սիրել, նրա հետ վարուել և նրա համար բան շինել: Ժողովրդին նոր ուղղութիւն տալը ոչ մեր խելքի բան է և ոչ ձեր, էն էլ բաւական մեծ շնորհք է, որ նրա յառաջադիմութեան ընթացքումը առաջին քայլողներիցը կարողանաք լինել: Թէ բան ունէք, բան շինեցէք, թէ որ չէ ձեր «պիտի պիտիները,» ձեր մեծ մեծ բրդած կարգ ու կանոններն, ձեր օգուտը հիմնած լուսաւորութիւնը ու յառաջխաղացութիւնը իսպանախից հեռանալ են, էլ ով է մտիկ տալի ձեր պոռոտախօսութիւններին, բան շինողներն բան են շինում: Էլի լաւ է ժողովրդի հետ խառնուէք, նրա ցաւն ու դարդն իմանաք, նրա կարողութիւնն ու տկարութիւնը հասկանաք, փոքր ինչ կարգին խօսէք քան թէ այդչափ օգուտը պոռոտաք և ինքներդ ձեզանից անմիտար մնաք: Գործ, գործ և ոչ թէ պոռոտախօսութիւն: Գործը կպսակի ամէն մարդու և ոչ թէ պոռոտախօսութիւնը:

Ոսկան.

«ԱՄԵՆԱՅՆ ԻՆՉ ԸՆԴՈՒՆԱՅՆ Է»

Վարդածղի Գարնան արփին
Այն ինչ յՈղիմպ ծածանի.
Եւ քառաբաժ տարերց բնութիւն
Ի ձև յայլ ձև փոփոխի,

Ճայթին ամպրոպք ամպեր խաղան
Ցողեն զցող գեղահոս
Հաւուց երամք եթերաճեմք
Խայտան, պարեն ի զբօս,

Ծիծաղախիտ ծառոց ծաղկունք
Ծաղկին ի ծիլ ոսկեփունջ
Եւ պարք թռչնոց յանուշ զեղգեղ
Զերդ դայլայլեն ի մրմունջ,

Ի սար, ի ձոր Աստուածազարդ
Ծաղին, շողան ի յըսփիւռ.
Շուշան չքեղ, նարկիզ, քրքում,
Վարդ. անթառամ, համասփիւռ.

Ցնծայ երկին, ցնծայ երկիր.
Ցնծայ աշխարհ համօրէն,
Եւ զայս տեսիլ անանց կարծեալ
Ցնծայ բնութիւն, բերկրօրէն,

Բայց ճայթ ի ճայթ մինչ դեռ գոռան,
Գոչեն հողմունք եւրոսեան,
Ցուղին անբաղդ ծղօտք և ծառք
Ատ, անդ թեքին՝ չառաչ տան,

Ցահեղ հողմոց յոյժ սրարշաւ
Սարսին ափունք և բարձունք,
Վէտ վէտ սահուն դիմօք տխուր
Ալեաց ողբան մկանունք,

Ճեպէ ճմեան դեղածիծաղ
Թաւուտ թիւեր. տերևներ,
Թռչնին, թափին, ոչ տեսարան
Գան և գնան ի յերեր,

Զայս ժամ տխուր աշխարհիլի
Տեսեալ դասող բնութեան
Ցոգւոց հանէ առնու ի միտ
Թէ այս ևս է ընդունայն,

Զքնաղաղեղ կոյս օրիորդ
Յառոյգ հասակ պատանի
Սքանչացեալ ի գեղ դիմաց
Նազէ ի նազ ծեքծեքի,

Հուժկու մարտիկք յորոց գրկաց
Տեղան չանթիք մարդախանձ
Ի գործ մոլի սուր սիզացեալ
Առնուն զպսակ զփառաց

Եւ առաւել հարուստ փարթամ
Տէր աշխարհաց և իշխան,
Յեցեալ յիւր փառք խրոխտապանծ
Յընչաց քերէ զամէն բան,

Իսկ ի վերջոյ սրոյն միջոց
Սրոյն և մահ զալկահար
Յանկարծ օրէն յանդուիթ միջոց
Յրեն սիրուն զտաղաւար,

Յոյս ամէնից ցնդի իւրոյ
Զի էր կարծիքն այն ունայն
Հապա ողբան, զղջան- ասեն
Թէ այս ևս էր ընդունայն,

Օ՜ն դուք Հայկեան վեհ դիւցազունք
Առէք աստի օրինակ,
Թէ պերճութիւնք, փառք աշխարհի,
Պատուոյ փառայն և պսակ,

Վաղանցուկ են և ընդունայն
Գարնանաղարդ ղէտ ծաղկանց,
Արդ լուարուք, ի միտ առէք
Զինչ այն որ էյար անանց,

Առաքինութեան մնան գործոց
Փոխան պսակ գերապանց
Զոր իցիւ թէ ասցեն երկինք
Աբրահամու փափանեանց։

Ա. Փ.

ԽՄԲԱԳԻՐ ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԷԳԵԱՆ.

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԻՆՖԻՆԱՃԵԱՆՑ

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ. Тифлисъ, 30 Октября, 1863 г.